Մուֆտա կուտ է տվել Ֆոն դեր Լայենը՝ մուֆտա կուտ, որն անիմաստ է: Այն, ինչ կարող է Հայաստանը վաճառել եվրոպական շուկայում, Եվրոպան արտադրում է: 450 միլիոնանոց շուկան արդեն վաղուց քվոտավորված է, իսկ եվրոպացիները վաղուց ստիպված են արտադրանքի ծավալը նվազեցնել, որ քվոտաները կարողանան ճիշտ օգտագործել:

Կարդացեք՝ էջ 4



Ռուբեն Ռուբինյանն ԱԺ-ն ղեկավարող ա՛, սեղան նստող, կենաց ասող ա՛... Ռուսները չե՞ն ասի՝ այ Նիկոլ Վավաեւիչ, մեր Ալենին տարել, էս ո՞ւմ ես բերել: Ռուբինյանը, ախր, այնքան անբռնազբոս թրքամետ է, համարյա՝ Քըլըչ-կրտսեր, մենք նրա հետ ինչպե՞ս ենք հարաբերվելու, ո՞նց եք պատկերացնում Ռուբինյան-Մատվիենկո հանդիպումը:

Կարդացեք՝ էջ 5



Ես չեմ հավատում, որ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը չեզոք դիրք է գրավել Սիմոնյան Ալենի պաշտոնավարման հարցում: Ո՞նց կարելի է «ուրախ ավտոբուսում» Ալենի կողքը նստած «պեռաշկի» ուտել, հետո հայտարարել, թե վարչությունն է փակ, գաղտնի քվեարկությամբ որոշել՝ ինքն այդտեղ ии при чём (այսինքն՝ մեղավոր չէ):

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 110 (4245), 4 հուլիս, շաբաթ, 2026

www.hraparak.am

ԵԿՄ նախագահ Սասուն Միքայելյանի մերձավոր շրջապատից տեղեկացանք, որ մտադիր է վերցնել պատգամավորական մանդատը: Հիշեցնենք, որ նա ՔՊ նախընտրական ցուցակում 28-րդն է: Ասում են՝ լուրեր են շրջանառվում, թե առաջիկայում Երկրապահ կամավորականների միությունը, որի նախագահը Սասուն Միքայելյանն է, լուծարվելու է, կառույցը վերանվանվելու է վետերանների միություն: Սա եւս, ըստ էության, ադրբեջանական պահանջների կատարման շարքում է: Միքայելյանը երեկ մեզ հորդորեց չշտապել: «Ժամանակը կգա՝ կիմանաք՝ վերցնո՞ւմ եմ մանդատը, թե՞ չէ»,- ասաց նա, իսկ ԵԿՄ-ն փակվելու լուրերի առնչությամբ էլ ասաց, որ լուրջ չվերաբերվենք. 4 տարի է՝ խոսում են այդ մասին: Հիշեցնենք. ՔՊ քասթինգի ժամանակ, երբ վարչությունը քննում ու ցուցակագրում էր առաջին 50-յակում ընդգրկված թեկնածուներին, փակ նիստի ժամանակ 20 հոգանոց վարչությունից որեւէ մեկը հարց չէր տվել Միքայելյանին, միայն Նիկոլ Փաշինյանն էր հետաքրքրվել. «Եթե պետք լինի, կհրաժարվե՞ս մանդատից, կամանդիր»: Միքայելյանը պատասխանել էր. «Կարամ հիմա էլ հրաժարվեմ, մանդատ նե տակ դառագոյ»: Որից հետո ձայների մեծամասնությամբ հավանություն էին տվել Միքայելյանի թեկնածությանը: Հավանաբար, հիմա «կամանդիրը» սպասում է, թե ինչ կպահանջի իրենից «գլավնակամանդույուշչին»:

Օրերս պաշտպանական գերատեսչության ամենաբարձր օղակներից ներքին հրահանգ է իջեցվել անձնակազմին՝ խորհրդարանական ընտրություններին ներգրավվածության հարցով «ներկա-բացակա» անել բանակում: Այն է՝ հասկանալ, թե ովքեր են կատարել հունիսի 7-ից առաջ իջեցված հրահանգը, ովքեր՝ չեզոք դիրք գրավել եւ հատկապես՝ բացահայտել սաբոտաժ անողներին, հրահանգը չկատարողներին, որոնց հորդորելու են ազատման դիմումներ ներկայացնել: Նրանք, ովքեր եռանդով են կատարել վերեւից իջած հրահանգը, առաջխաղացում կունենան, նրանք, ովքեր թերացել են՝ պաշտոնի իջեցում: Մենք դեռեւս նախընտրական շրջանում գրել էինք, որ բանակում անձնակազմի ներքին հրահանգավորման պատասխանատվությունը դրված է եղել ոչ միայն զինվորական հրամանատարների, այլեւ տվյալ տարածքների ուժայիններին վրա, որոնք համակարգել են ընտրություններին ՔՊ-ի համար ձայն բերելու գործընթացը: Երբեմն ընտանյոք հանդերձ ներգրավված են եղել եւ ակտիվ դերակատարում ունեցել: Իսկ քվեարկության օրը համակարգել են շարքայիններին տեղամաս տանելու գործն ու վերահսկել, թե ինչպես են քվեարկում ծառայողները:

Բռնատե՛ս, բռնատե՛ս

Մի ժամանակ ՔՊ-ական իշխանությունը հպարտանում էր արդար, մաքուր ընտրություններով, ասում էր, որ այլեւս փակ է ընտրակեղծարարության էջը, դատապարտում էր մինչեւ 2018 թիվն անցկացված բոլոր ընտրությունները: Բայց մենք տեսանք, թե ինչպես են համայնքներում ընտրված անձանցից քրեական գործիքներով խլում իրենց հաղթանակը եւ անգամ կալանավորում, ինչպես են անգամ ՔՊ-ի ներքին ընտրությունների ժամանակ զեղծարարություններ անում: Տեսանք, թե ինչ խայտառակ մթնոլորտում ընթացան 2026-ի ընտրությունները՝ ինչ անասելի ճնշումներ գործադրվեցին մրցակիցների նկատմամբ, ինչ անհավասար պայմաններում էր ընթանում պայքարը, ինչքան հանրային ռեսուրս օգտագործեցին: Իսկ քվեարկության արդյունքները հաշվարկելիս ապօրինաբար չեղարկեցին 3 ընտրատեղամասի արդյունքները, որ մի ամբողջ կուսակցություն դուրս մնա խորհրդարանից, եւ նրան հասանելիք մանդատները յուրացնեն: Այս պայմաններում անհնարին է խոսել արդար ընտրությունների մասին, եւ այլեւս հնարավոր չէ խոսել այն մասին, որ Հայաստանը ժողովրդավարական երկիր է: Չնայած Նիկոլ Փաշինյանին ինչ-որ մեկը համոզել է, որ ժողովրդավարության միակ ցուցանիշը լրագրողների՝ հարց տալու ազատությունն է: Նա արդեն որերորդ անգամ նույն միտքն է կրկնում լրագրողների մոտ, թե՝ եթե ես բռնապետ լինեի, երկիրն էլ բռնապետական լիներ, դուք այդ հարցը չէիք կարողանա տալ ու հանգիստ հեռանալ: Բայց չէ՞ որ մենք նաեւ տեսել ենք, թե ինչպես է մի պարզ հարցը դառնում մարդուն կալանավորելու հիմք: Եվ ինչպես էր իրեն հարցեր ուղղող մարդու վրա բղավում՝ ինչո՞ւ դու չես զոհվել: Տեսել ենք, թե ինչպես են իրեն հարցեր ուղղած քաղաքացուն մի քանի օր անց դաժան ծեծի ենթարկում: Տեսել ենք, թե ինչպես են իրեն քննադատող մարդիկ հորինված մեղադրանքներով բանտում հայտնվում:

ՊՆ մեր աղբյուրներից տեղեկացանք, որ 2022 թվականից հետո պաշտպանական գերատեսչությունում, այսպես կոչված, «ստուկաչների ինստիտուտ» է ձեւավորվել: Ամեն զորամասում նախարար Պապիկյանը նշանակել է մեկ հոգու, որը եղել է իր աչքն ու ականջը: Այդ անձը պետք է պարզեր, թե ով ինչ քաղաքական հայացքներ ունի, ինչ է մտածում իշխանությունների մասին եւ այլն: Մի քանի զորամասերում «պալիտ են արել» «ստուկաչներին», ընդ որում, կարելի է ասել՝ իրենք են իրենց «պալիտ արել», քանի որ այնքան են հարցեր տվել ու սադրել զորքին, զինծառայողների քաղաքական հայացքներով հետաքրքրվել, որ պարզ է դարձել նպատակը: Մեզ պատմեցին, որ բացահայտված «լրտեսների» նկատմամբ որոշ տեղերում պատժիչ գործողություններ են իրականացվել:

ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՍՊԱՍՎՈՒՄ

Խորհրդարանական ընտրություններից հետո իշխանական վերնախավի «չիստկան», ըստ որոշ տեղեկությունների, չի շրջանցի նաեւ Երեւանի վարչական շրջանները: Առաջիկայում փոփոխություններ են սպասվում նաեւ վարչական ղեկավարների շրջանում: Մեր աղբյուրը չի բացառում, որ գրեթե բոլոր վարչական ղեկավարներին կփոխեն, սակայն առաջին պլանում այն վարչական շրջանների ղեկավարներն են, որոնց տարածքներում ՔՊ-ն հունիսի 7-ի ընտրություններում քիչ ձայներ է հավաքել: Բանն այն է, որ եթե ՔՊ թվանկարչությունը հանվի, ապա իրականում մայրաքաղաքում ՔՊ-ի համար բավականին տխուր պատկեր է գրանցվել, եւ դա շատ լավ գիտի իշխանությունը, ու սրանով է պայմանավորված, որ Նիկոլ Փաշինյանը, ընտրությունների գիշերը չսպասելով արդյունքների մասին ԿԸՀ թվերին, Երեւանից ստացված մի քանի տվյալից հետո շտապեց ասուլիս տալ ու հայտարարել, որ իրենք հաղթել են ու միանձնյա իշխանություն են ձեւավորելու:

ԲԱՆԱԿ

ՏԱՎՈՒՇԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ ՏԵՂԱՓՈԽԵՑԻՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

Բարձրաստիճան զինվորականների նոր նշանակումների մասին համակարգում վաղուց էին խոսում: Թերեւս ամենասպասվածը 2-րդ բանակային կորպուսի գեներալ-մայոր Գարեգին Պողոսյանի նշանակումն էր՝ հատուկ բանակային կորպուսի հրամանատար: Պողոսյանը նախընտրական փուլում ակտիվորեն ներգրավված էր ՔՊ-ի վերարտադրության գործին.

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

այդ մասին բազմաթիվ հրապարակումներ կան մամուլում: Հատուկ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից ազատվել է Արմեն Գյոզալյանը, որը հուլիսի 2-ին նշանակվել է ՊՆ ռազմական վերահսկողական ծառայության պետի տեղակալ:

Ինչ խոսք, սա Գյոզալյանի համար, որը հայկական բանակի առանցքային եւ փորձառու բարձրաստիճան զինվորականներից է, պաշտոնի իջեցում է: Այս պաշտոնը աստիճանով համապատասխանում է գեներալ-մայոր Արմեն Գյոզալյանին, բայց ազդեցության առումով անհամեմատ ավելի ցածր է, քան կորպուսի հրամանատարի պաշտոնը: Նրա մոտալուտ պաշտոնանկության մասին վաղուց էին խոսում՝ նշելով, որ նախարար Սուրեն Պապիկյանը սիրում է իրեն շրջապատել բացառապես իրեն անձնապես նվիրված կաբինետային գեներալներով, մինչդեռ Արմեն Գյոզալյանն այդպիսին չէր, կարծես: Նա սյունեցի է, ծնունդով երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի գյուղից է՝ Տեղ համայնքից, մարտական լուրջ ուղի է անցել, 2023 թվականի ապրիլին, իր ծննդավայր Տեղ գյուղի սահմանային բախումների ժամանակ առաջնագծում գտնվելիս վիրավորվել է: Ի տարբերություն զուտ կաբինետային կադրերի, Գյոզալյանն ընկալվում է որպես դաշտային գեներալ, անձամբ է համակարգել առաջնագծի ամրացման եւ ինժեներական աշխատանքները: Մյուս կողմից, նա «օդիոզ» գեներալներից է, որի դեմ բողոքներ ու դժգոհություններ կային, որ նա բիզնեսով է զբաղվում:

Գարեգին Պողոսյանին բանակում համարում են թույլ հրամանատար, բայց պարտաճանաչ մարդ եւ ծառայող: Նա այս տարվա մայիսի 28-ին է ստացել գեներալի կոչումը, ակնհայտ է, որ Նիկոլ Փաշինյանը գոհ է նրանից:

2-րդ բանակային կորպուսի հրամանատար է նշանակվել գեներալ-մայոր Սիմոն Նազարյանը: Նա մոտ 2 տարի զբաղեցնում էր 3-րդ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնը, պատասխանատու է եղել Տավուշի մարզի սահմանագծի համար: Տավուշի ուղղությամբ նրա հրամանատարության շրջանը համընկավ սահմանազատման բավականին զգայուն գործընթացի հետ: Փաստորեն, այժմ նա ղեկավարելու է Գեղարքունիքի մարզի սահմանային ուղղության պաշտպանությունը:

Թերեւս, ամենաանսպասելին Արծրուն Հովհաննիսյանի նշանակումն էր ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի պետ: Նախկինում այս պաշտոնը զբաղեցնում էր Ալբերտ Բաղդասարյանը: Արծրուն Հովհաննիսյանի կողմնակիցները նշում են, որ նա երկար տարիներ զբաղվել է ռազմական պատմության, մարտավարության եւ տեխնոլոգիաների հետազոտությամբ եւ հարմար թեկնածու էր համալսարանի պետ նշանակվելու համար: Նաեւ ունի հանրային կապերի եւ կրթական ծրագրերի կառավարման փորձ, օրինակ՝ Պատերազմական հետազոտությունների հայկական կենտրոնի հիմնադրումը: Սակայն հանրությունը նրան հիշում է կեղծ լավատեսական ինֆորմացիայով՝ 44-օրյա պատերազմի ժամանակ, եւ նրա «Հաղթելու ենք» խոստումը պատերազմից հետո զայրույթ եւ վստահության կորուստ առաջացրեց նրա անձի նկատմամբ, ուստի այս նշանակումն ընկալվում է որպես իշխանություններին հավատարիմ կադրի առաջխաղացում: Մինչդեռ նախկին պետը՝ գեներալ-լեյտենանտ Ալբերտ Բաղդասարյանը, ներկայացնում էր Զինված ուժերի ավագ, ավանդական հրամանատարական կազմը եւ ընկալվում էր որպես ապաքաղաքական կերպար, որին հարգում էին համակարգում:

96 միլիոնի մեջ 1 միլիոնը արտահանում չէ

«Այս տարի ծիրանի քանակը շատ քիչ է, բայց եթե շատ լիներ, իրացնելու խնդիր էր լինելու»,- մեզ հետ զրույցում ասաց ձեռնարկատեր **Հարություն Մնացականյանը**: «Եվրոպայում որ ասում են՝ ծիրան-ծիրան, այնտեղ ծիրան գնում են բացառապես Եվրոպայում ապրող հայերը, եվրոպացին հայկական ծիրան չի գնում, ինքը չգիտի ու սովոր էլ չի այդ ապրանքին: Այս տարի ծիրան արտահանվել է փոքր քանակով Դուբայ, 1 տոննայի չափ փորձնական ուղարկել են Սիգապուր, մոտ 350 տոննայի չափ ընկերներս արտահանել են Ուկրաինա, մասնավորապես՝ Լվով, Կիեւ, մի խմբաքանակ ուղարկել են Գերմանիա, մեկ էլ մի խմբաքանակ ինքնաթիռով ուղարկել են Ֆրանսիա»: Իսկ արտահանողները կառավարության սուբսիդավորման ծրագրից օգտվե՞լ են: Հարությունյանն ասաց. «Իմ ունեցած տվյալներով, մինչ այժմ որեւէ մեկը փոխհատուցում չի ստացել»: Նա նշեց, որ այլ մթերքների առումով էլ անհամեմատ քիչ են եղել այլ երկրներ արտահանման ծավալները, քան արտահանվում էր Ռուսաստան. «Սարսափելի քիչ քանակներ են արտահանվել, թող 1 մլն հատ էլ ծաղիկ արտահանած լինեն, ընդհանուր 96 մլն արտահանման մեջ 1 մլն հատը շատ քիչ քանակ է: Բացի այդ, եվրոպական շուկայում շատ բարձր ստանդարտներ են դրված, իսկ ռուսական շուկան այդ ստանդարտները չունի, բացի այդ՝ լոգիստիկ ծախսերն էժան են, ժամանակահատվածն է կարճ, օրինակ, Մոսկվա բեռ հասցնելու համար 2-3 օր է անհրաժեշտ, իսկ Եվրոպայի կենտրոն հասցնելու համար լավագույն դեպքում՝ 8 օր: Ծախսային մասով էլ դեպի Եվրոպա ավելի թանկ է: Իտալիա հացահատիկ եմ արտահանում, որի համար 1 ֆուռին տալիս եմ մոտ 5200-5300 եվրո, իսկ սառնարանային ռեժիմով գնացող բեռների համար 7000-7500 եվրոյից ավել են վճարում, ինչը բավականին բարձր արժեք է»:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԴԻԱԿԻ ՎՐԱ ԲՌՆՈՂՆ ՈՒ ՄԱՐԴԱՍՊԱՆԻՆ ԱՐԴԱՐԱՑՆՈՂՆ ԻՐ ՍԻՐԵԼԻ ՄԱՍԻՍ ՄԵԼՔՈՆՅԱՆՆ Է

Նիկոլ Փաշինյանի թիրախում նորից դատահիրավական համակարգն է: Հինգշաբթի օրը, կառավարության նիստից հետո տեղի ունեցած ճեպազրույցի ընթացքում նա անդրադարձել է դատահիրավական համակարգում առկա խնդիրներին՝ նշելով, որ Հայաստանում արդարադատությունը շարունակում է հասանելի լինել միայն «էլիտային»: «Ես էլի եմ ասում՝ ո՞նց են այդ մարդիկ, ում քսակը ավելի հաստ է, ցանկացած գործով գնում, արդարանում դատարանում: Ցանկացած գործով: Խնդիր չունեն, այնպիսի խնդիր չկա, որ չկարողանան լուծել դատական համակարգի մեջ: Ասենք՝ դիակի վրա կարող են մարդկանց բռնեցնել, գնան, հետո արդարանան, դուրս գան եւ այլն: Բա դա է, որ ասում եմ՝ եռագլուխ մաֆիայի դեմ ենք պայքարում այս ութ տարին: Այդ թվում՝ այն պատճառով, որ ժողովրդավար ենք, սկզբունքներ ենք պահում: Եթե ավտորիտար լինեինք, տոտալիտար լինեինք, այդ խնդիրը չէր լինի»,- ասել է Փաշինյանը:

Փաստաբան **Զարուհի Փոստանջյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով թեմային, ասում է՝ եզակի դեպք է, որ Փաշինյանը ճիշտ է ասում, սակայն խոսքը ոչ թե ողջ դատական համակարգի մասին է, այլ, օրինակ, Փաշինյանի սրտի դատավոր Մասիս Մելքոնյանի: Փոստանջյանը մասնավորապես նշում է. «Ասում է՝ դիակի վրա մարդուն բռնում են, չեն պատժում: Համաձայն եմ, այո, ես մի գործով պաշտպան եմ: Անձին այնքան են ծեծել, որ հասցրել են մահվան, կոտրել են ոսկորները, սակայն Նիկոլի սիրելի դատավոր Մասիս Մելքոնյանը սպանություն կատարած անձին ընդամենը հինգ տարվա պայմանական ազատազրկման է ենթարկել, եւ մարդու կյանք խլած անձը մինչեւ այս պահն ազատության մեջ է: Սա էլ հո քաղաքական գործ չէ՞, բայց այսպես են աշխատում իշխանության սիրելի դատավորները: Գլխավոր դատախազը պարտավոր է բողոքարկել այս դատական ակտը, ես տուժողի ներկայացուցիչն եմ, դիմել ենք վերաքննիչ դատարան, վերաքննիչը «պայմանականը» վերացրեց՝ անձին դատապարտելով հինգ տարվա ազատազրկման, սակայն նա մինչ այս պահը անգամ մեկ օր չի կրել իր պատիժը, իսկ որ ամենացավալին է՝ ի՞նչ է նշանակում՝ մարդու կյանք խլել եւ դատապարտվել ընդամենը 5 տարվա ազատազրկման: Հինգ տարով մարդկանց դատում են, օրինակ, խոսքի ազատության հետ կապված, միեւնույն ժամանակ՝ մարդ սպանելու համար: Դատախազը պետք է բողոք ներկայացներ վճռաբեկ դատարան, սակայն չի դիմել՝ պատճառաբանելով, որ տուժող կողմի ներկայացուցիչն է դիմել: Այնպես որ, դիակի վրա բռնողն ու մարդ սպանողին արդարացնողն իր սիրելի Մասիս Մելքոնյանն է: Նիկոլ, իսկ դատախազն ու Մասիս Մելքոնյանը կարո՞ղ է կաշառք են վերցրել: Ի դեպ, այստեղ ամենամեծ մեղքը դատախազությանն է, Քննչական կոմիտեինն է, Հակակոռուպցիոն կոմիտեինն է: Ակնհայտ անարդարացի դատական ակտի համար թող հաղորդում տան հանցագործության մասին, եթե այսքան ազնիվ են: Պատկերացրեք՝ մարդուն զրկում են կյանքից, եւ ոչ մի պատիժ: Մասիս Մելքոնյանի համար մարդ սպանելը հանցանք չէ: Ես նման դատական ակտ այդպես էլ չգտա, որ անձին կյանքից զրկես եւ անպատիժ մնաս: Դա չլսված բան է: Մարդիկ այս ամենը տեսնելով ի՞նչ պետք է մտածեն, պետք է մտածեն, որ եթե մեկին մարդ սպանելու համար չեն պատժում, ուրեմն մարդ սպանելն այնքան էլ լուրջ հանցանք չէ, կարող ենք մենք էլ սպանել: Մասիս Մելքոնյանի դեմ ինչո՞ւ չկա որեւէ պրոցես: Հարգելով անմեղության կանխավարկածը՝ առնվազն քրեական վարույթ պետք է նախաձեռներ դատախազը, որովհետեւ այս ամենը դուրս է տրամաբանությունից: Ինչի՞ց ելնելով է Մասիս Մելքոնյանը որոշել մարդ սպանողին անգամ մեկ օրով չազատազրկել, ուրեմն այստեղ կա, օրինակ, կաշառք»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՆ

ՈՐՈՇԵԼ Է ԱՐՑԱԽԻ ՎԵՐՋԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ՈՉՆՉԱՑՆԵԼ

Ուրջ մեկ տարվա պաշտոնավարումից հետո երեկ Արցախի Ազգային ժողովի նախագահ Աշոտ Դանիելյանն անակնկալ հայտարարեց իր հրաժարականի մասին: «Երկար մտորումներից, քննարկումներից եւ վերջին օրերի խորհրդակցություններից հետո որոշում եմ կայացրել հրաժարվել Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի պաշտոնից: Այս որոշումն ինձ համար հեշտ չի եղել: 2025 թվականի մայիսի 21-ին այս պաշտոնը չեմ ստանձնել անձնական շահից, քաղաքական հավակնությունից կամ պաշտոն ունենալու ցանկությունից ելնելով: Պաշտոնը ստանձնելու իմ նպատակը պետական ինստիտուտների պահպանման հարցը բարձիթողի վիճակում չթողնելն էր, հատկապես այն ժամանակ, երբ Արցախի պետական կառույցների շարունակականությունը, մեր ժողովրդի քաղաքական ձայնն ու իրավունքների պաշտպանությունը կանգնած էին լրջագույն վտանգի առաջ»,- իր ծավալուն հայտարարության մեջ նշել է նա պաշտոնանկության պատճառների մասին՝ առանց փակագծեր բացելու: «Սակայն վերջին ժամանակահատվածում իմ անձի շուրջ ձեւավորված կեղծ եւ արհեստական խոսակցությունները, շրջանառվող անհիմն մեղադրանքներն ու զրպարտությունները եւս ազդել են այս որոշման կայացման վրա: Չեմ ցանկանում, որ իմ անձի դեմ ուղղված նպատակային արշավը որեւէ կերպ ստվեր նետի Արցախի Հանրապետության, նրա պետական ինստիտուտների եւ Ազգային ժողովի հեղինակության վրա: Երբ անհրաժեշտ միասնականությունն ու ընդհանուր պատասխանատվությունը բացակայում են, մեկ կամ մի քանի հոգի չեն կարող շարունակաբար կրել ամբողջ բեռը: Ուստի այս որոշումը նաեւ պետական կառույցն անձնական շահարկումներից եւ արհեստականորեն ստեղծված հակադրություններից զերծ պահելու գիտակցված քայլ է: Հետեւաբար, ներկայացնում եմ իմ հրաժարականը Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի պաշտոնից»,- հայտարարել է Աշոտ Դանիելյանը:

Հիշեցնենք. նա ԱՀ ԱԺ նախագահի պաշտոնում ընտրվել է անցած տարվա մայիսի 21-ին, Արցախի խորհրդարանականների կողմից՝ Բաքվում գերության մեջ գտնվող Դավիթ Իշխանյանի փոխարեն: Դանիելյանն Արցախի ԱԺ պատգամավոր էր ընտրվել Արցախի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանի «Ազատ հայրենիք- ՔԴՄ» դաշինքի ցուցակով, սակայն հայտնի իրադարձությունների ժամանակ չի ողջունել նրա՝ Նիկոլ Փաշինյանի քաղաքականության հետ համաձայնությունը: Արդեն Երեւանում Դանիելյանը բազմիցս հանդես է եկել հրապարակային ելույթներով՝ ծանր քննադատության ենթարկելով ՔՊական իշխանության քաղաքականությունն Արցախի հարցում: Ուստի նա թե՛ անձնական դրդապատճառներով էր դարձել Նիկոլ Փաշինյանի ու նրա իշխանության աչքի փուշը, թե՛ ի պաշտոնե:

Մեզ պատմեցին, որ վերջին շրջանում Դանիելյանի նկատմամբ պրոցեսներ են գեներացվել՝ եւ արցախցիների, եւ հայաստանյան ինչ-ինչ շրջանակների կողմից, որից էլ օգտվել են իշխանությունները ու մեծացրել ճնշումը նրա նկատմամբ: Պարզվում է՝ Հայաստան բռնի տեղափոխումից հետո Արցախի վերնախավը դատական կարգով ակտիվացրել է «Արցախ ֆրութ» ընկերության հաշիվները՝ հիմքում դնելով այն փաստարկը, որ ընկերությունը մեծ պարտքեր ունի արցախցիներին, եւ այդ գումարները հարկավոր են ժողովրդի պարտքերը մարելու համար, բայց ընդհանուր 36 միլիոն դրամից 16 միլիոնն է պարտք եղել, մնացածը հաշվառել են պետական բյուջե, որ օգտագործեն Արցախի ներկայացուցչության ծախսերի համար: Սակայն ներկայացուցչությունը, խորհրդարանի պատգամավորները վերջերս դժգոհություն են հայտնել այդ գումարների տնօրինման հետ կապված, թե ինչու կոլեկտիվ չեն որոշվում այդ հարցերը, այլ Դանիելյանը միանձնյա է տնօրինում, սակայն հրաժարականի հարց, ինչպես մեր աղբյուրը պնդեց, երբեք չեն բարձրացրել: Ավելին, երբ Դանիելյանն ասել է՝ եթե կասկածում են իրեն, հրաժարական կտա, թող ուրիշը գա, դեմ են արտահայտվել՝ հասկանալով, որ ներկա իրավիճակում դա ՀՀ իշխանությունների ծրագրերի ջրաղացին ջուր կլցնի, այլեւս թույլ չեն տա Արցախի ԱԺ նախագահ ընտրել եւ կվերացնեն այս կարեւոր պետական ինստիտուտը:

Բայց այդ խառն իրավիճակից օգտվել են Արցախի ՀԿ սեկտորի որոշ ներկայացուցիչներ, հիմնականում՝ նրանք, որոնց մասին ասում են, թե կառավարվում են ՀՀ իշխանությունների հետ փոխկապակցված անձանց կողմից: Եվ նրանք են սկսել գրոհ ձեռնարկել, ֆեյսբուքյան լայվեր անել, այցելել Արցախի ներկայացուցչություն եւ Դանիելյանի կյանքը թունավորել: Նրանք այն խմբի ներկայացուցիչներն են, ովքեր ամիսներ առաջ Արցախի ներկայացուցչության շենքի առջեւ բողոքի ցույցեր էին անում՝ իբր ներդրումային հիմնադրամի գումարները վատնելու, յուրացնելու մեղադրանքով, եւ իշխանական վերնախավին հորդորում էին պատասխանատվության հարց բարձրացնել, իսկ եթե չեն կարող՝ հրաժարական տալ: Այս շարքում էին Տիգրան Պետրոսյանը, Նահապետ Սարգսյանը, Արտուր Օսիպյանը եւ ուրիշներ: Սակայն արցախյան շրջանակներն ասում են, որ բողոքի մասնակիցներն իրենք էլ են միլիոններ ստացել ներդրումային հիմնադրամից, այնպես որ՝ «թալանչի» տերմինը կիրառելի է նաեւ իրենց նկատմամբ: Օրինակ, ոմն Նահապետ Սարգսյան 60 մլն դրամ է ստացել հիմնադրամից՝ մեղվաբուծությամբ զբաղվելու համար: Մեզ ասացին, որ Աշոտ Դանիելյանի դեմ վերջին օրերին ամենաակտիվը հենց նա է պայքարել, իրավապահներին հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել:

Դանիելյանը, հասկանալով, որ իր դեմ արշավի հետեւում Արցախի պետական ինստիտուտները ոչնչացնելու մարմաջով ապրող Նիկոլ Փաշինյանն ու նրա թիմն են, որոշել է հրաժարական ներկայացնել, ընդ որում՝ իր քայլի մասին նախապես չի տեղեկացրել Արցախի ԱԺ պատգամավորներին: Մենք մի քանի օր է՝ փորձում ենք զրուցել Դանիելյանի կամ այս պատմության որեւէ այլ դերակատարի հետ, սակայն չի հաջողվում: Իսկ թե ինչպես է հանգուցալուծվելու ԱԺ նախագահի պաշտոնի հարցը, մեր աղբյուրները դժվարանում են պատասխանել, նոր նախագահ ընտրելու համար 17 պատգամավորի կողմ քվե է պետք, ներկա իրավիճակում այդ թիվն ապահովել հնարավոր չէ, եւ շատերը վախենում են՝ պատրաստ չեն Փաշինյանի պատժիչ մեքենայի թիրախում հայտնվել, ոմանք էլ ապրուստի խնդիր ունեն եւ Հայաստանից բացակայում են:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՎԵՐԻՆ ՈՍԿԵՊԱՐԸ ԿՀԱՆՁՆԵՆ, ԻՍԿ ԲԵՐՔԱԲԵՐԻ ՀՈՂԵՐԸ ՀԵՏ ՉԵՆ ՍՏԱՆԱ

Մայիսի 30-ի նախընտրական քարոզարշավի ընթացքում Նիկոլ Փաշինյանը Ոսկեպարում հայտարարեց, որ ամենակարեւոր գործերից մեկը համարում է սահմանազատման գործընթացն ավարտին հասցնելը, որպեսզի ոսկեպարցի երեխաներին լուծելու կիսատ գործ չթողնեն: Ոսկեպարի բնակիչների զգալի մասն անհանգստացած է, որ սահմանազատումը շարունակելու դեպքում Վերին Ոսկեպար (Յուխարը Ասկիպար) նախկինում ադրբեջանաբնակ անկլավը, Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի մաս կազմող Կիրանց-Ոսկեպար ճանապարհի շատ հատվածներ կհանձնվեն Ադրբեջանին, կխաթարվի Ոսկեպարի եւ հարակից հայկական գյուղերի կապը մարզկենտրոն Իջեւանի ու Հայաստանի այլ տարածքների հետ:

Սահմանազատման շարունակության դեպքում խնդիր է ծագելու Ոսկեպարի 3 ընտանիքների տների հետ կապված, որոնք՝ սահմանազատողների քարտեզով, գտնվում են Ադրբեջանի տարածքում: Այդ պատճառով էլ այդ տների սեփականատերերին Կադաստրի կոմիտեից անշարժ գույքի սեփականության վկայականներ չեն տրվել: Սահմանազատման նոր փուլով Վերին Ոսկեպարի տարածքն Ադրբեջանին հանձնելու դեպքում Ոսկեպար գյուղի բնակիչների կյանքը շատ առումներով է անտանելի դառնալու: Ոսկեպարցիները հողագործությամբ չեն զբաղվում, հացահատիկ չեն ցանում, լոկ իրենց տնամերձ հողամասերն են մշակում: Բնակիչների մեծ մասը զբաղված է անասնապահությամբ, գյուղի անասուններն առանց հսկողության արածում են Ոսկեպարի ու Վերին Ոսկեպարի արոտավայրերում: Վերին Ոսկեպարի տարածքն Ադրբեջանին հանձնելու պարագայում Ոսկեպարում անպայման անասնապահության անկում է լինելու՝ պահվող անասունների քանակը կրճատվելու է: Ոսկեպարը խմելու ջուր է ստանում 3 ջրագծից, որոնցից մեկի ակունքը գտնվում է Վերին Ոսկեպարում: 2016 թվականին այդ ջրային ակունքից Ոսկեպարը սնուցող 7750 մ երկարությամբ ջրագիծ է կառուցվել: 92 միլիոն դրամ արժեքով այդ ծրագիրը ֆինանսավորել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ծրագրի արժեքի 4 տոկոսի չափով ներդրում է կատարել Ոսկեպար համայնքը՝ ռուսաստանաբնակ ոսկեպարցիների ֆինանսական հանգանակության եւ համայնքի բյուջեից մասհանման միջոցով: Այն վայրկյանում 4 լիտր խմելու ջուր է մատակարարում Ոսկեպարին, սակայն ամռան տապին ջրագծի հզորությունն ընկնում է: Այդ ջրատարի գործարկմամբ լուծվեց նաեւ Ոսկեպարի խմելու ջրի խնդիրը, այդ ջրով ոռոգվում են նաեւ գյուղի տնամերձները: Վերին Ոսկեպարի տարածքն Ադրբեջանին հանձնելու դեպքում այդ խմելու ջրագիծն ինչպե՞ս է գործելու: 2011թ. օգոստոսի 31-ին նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ կայացավ Ոսկեպար, Ոսկեվան, Կոթի եւ Բաղանիս գյուղերի ոռոգման ինքնահոս ջրագծի բացումը: Ծրագիրն իրականացվեց Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի՝ ԻՖԱԴ-ի ֆինանսավորմամբ, 4 գյուղերում մոտ 1000 հեկտար տնամերձ հողեր ոռոգելի դարձան: Նոյեմբերյանի սարերի ջրերից եւ Ոսկեպար գետից սնվող, 37 կմ երկարությամբ ջրագծի որոշ հատվածներ ձգվում են Վերին Ոսկեպարի տարածքով: Վերին Ոսկեպարի տարածքն Ադրբեջանին հանձնելու դեպքում սահմանագոտու 4 գյուղերի համար կենսական նշանակություն ունեցող ոռոգման ջրագծի հատվածը կհայտնվի Ադրբեջանի տարածքում:

Հաջորդը՝ Հայաստանը սնուցող մայր գազատարը ձգվում է Ոսկեպար գյուղի տարածքի վերին մասով: Վերին Ոսկեպարի տարածքը սահմանազատումով Ադրբեջանին հանձնելու դեպքում մայր գազատարը հայտնվելու է սահմանագծին: Ոսկեպարի բնակիչները հույս ունեն, որ սահմանազատման շարունակության դեպքում նախկինում ադրբեջանաբնակ անկլավ Վերին Ոսկեպարի տարածքը կփոխանակվի Իջեւան համայնքի Բերքաբեր գյուղին պատկանող շուրջ 900 հեկտար հողերի հետ, որոնք գտնվում են Ջողազի ջրամբարի ձախ ափին: Դրանք 1990-ական թվականների սկզբից ադրբեջանական զինուժի վերահսկողության ներքո են, ադրբեջանցիները մասամբ մշակում են այդ հողերը, բայց դրանք հայկական են բոլոր ժամանակների քարտեզներով: Այնպես որ, սահմանազատում անելիս պետք է Հայաստանին վերադարձվի ոչ միայն Ջերմուկի, Սոթքի, Սեւ լճի, այլ նաեւ Բերքաբերի նշված հատվածը: Սակայն խիստ կասկածելի է, որ սահմանազատման նոր փուլում Հայաստանի իշխանությունը հետամուտ կլինի մեր հողերը վերադարձնելուն, Ադրբեջանն էլ կհամաձայնի այդ տարբերակին: Ադրբեջանի նպատակը Հայաստանից նոր տարածքներ ստանալը, սահմանամերձ գոտու բարձունքների, տրանսպորտային ուղիների վրա վերահսկողություն հաստատելն է:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՕՐԵՆՔ

100 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԿԱՆԱՆՑ ԱՐԳԵԼՎԱԾ ԷՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ

ԱԺ ՔՊ խմբակցության նախաձեռնությամբ հերթական հակասահմանադրական փոփոխությունները կատարվեցին, որով սահմանվեց, որ Հայաստանում համապետական ընտրություններին եւ հանրաքվեներին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիություն ունեցող այն անձինք, որոնք ընտրություններին նախորդած մեկ տարվա ընթացքում 6 ամիս բնակվել են Հայաստանում: Նախագծի հեղինակներն են Ալիսա Ղազարյանը եւ Արուսյակ Մանավազյանը: Նախ աղմուկ բարձրացրին, թե հունիսի 7-ի ընտրություններում Ռուսաստանը փորձում է փոխել քվեարկության արդյունքները եւ ՌԴ-ում բնակվողներին ուղարկում է Հայաստան, որ ընդդիմությանն ընտրեն: Բայց իրականում սա մի նպատակ ունի՝ նվազեցնել հանրաքվեին մասնակցողների քանակը, որ կարողանան ալիեւյան սահմանադրությունն անցկացնել առաջիկայում: Ըստ հանրաքվեի մասին օրենքի, հանրաքվեի դրված նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ է արտահայտվել քվեարկությանը մասնակցածների կեսից ավելին եւ ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ երրորդը: Այսինքն, ընտրացուցակներում գրանցվածների քանակը շատ կարեւոր է, եթե այս 6-ամսյա սահմանափակումն ընդունելուց հետո հանրաքվեի կայանալու համար անհրաժեշտ ձայների քանակը նվազեցվի, ասենք, մի 100-150 հազարով, սա արդեն իշխանամետ զանգվածով ու վարչական ռեսուրսով հնարավոր կլինի անցկացնել:

Փոփոխությունների հիմնավորման մեջ նախաձեռնողները նշել են, որ ներկայիս կարգավորումներով բացակայում է քաղաքացի-պետություն մշտական կապն արտացոլող որեւէ լուծում, քաղաքացիությունը միայն իրավական կատեգորիա չէ, այլ «պատկանելություն եւ մասնակցություն է այդ պետության քաղաքական կյանքին եւ իր շահերը շոշափող համապատասխան որոշումների կայացմանը»: Հետեւապես, ընտրելու իրավունք ունեն նրանք, ովքեր ապրում են կամ սերտ կապը պահել են իրենց պետության հետ, նրանք, ովքեր «ոչ միայն մասնակցում են հանրային իշխանության ձեւավորմանը, այլեւ՝ ստանձնում այդ իշխանության գործունեության հետեւանքները կրելու պատրաստակամություն» եւ այլ ճոռոմաբանություններ:

Ի դեպ, որքան էլ այս նախագիծը քննադատվեց՝ որպես հակասահմանադրական, հակաօրինական, մարդու իրավունքները ոտնահարող, գործող ԱԺ-ն երեկ՝ վերջին շնչում այն ընդունեց՝ հող նախապատրաստելով, որ Ալիեւի թելադրած սահմանադրությունն անարգել անցկացնեն: Եվ սահմանեց, որ քվեարկության կամ հանրաքվեի օրվան նախորդած 48-րդ օրվա դրությամբ՝ նախորդած 365 օրվա ընթացքում ՀՀ-ում փաստացի 183 եւ ավելի օր գտնված անձինք միայն կարող են քվեարկությանը մասնակցել: Հաջորդ քայլը կլինի հանրաքվեի նախօրյակին ընտրացուցակները 6 ամիս եւ ավելի բացակայած անձանցից մաքրելը եւ հանրաքվեի ընդունման օրենքով պարտադիր ցեղզն իջեցնելը: Անցյալում հանրաքվեն ընդունված է համարվել, եթե այն ստացել է մոտ 625 հազար կողմ ձայն, այս փոփոխություններից հետո՝ եթե ընտրողների քանակը նվազեցնեն ու հասցնեն 2 միլիոնի, ապա հանրաքվեի համար կպահանջվի ընդամենը 500 հազար ձայն՝ պայմանով, որ կողմ ձայները գերազանցեն դեմ ձայներին:

Այս ակնհայտ հակասահմանադրական նախագծին նույնիսկ իշխանությանը կից քաղաքացիական հասարակության որոշ ներկայացուցիչներ դեմ արտահայտվեցին: Ի դեպ, այս հարցում իշխանական քաղհասարակությունը պառակտված է՝ մի մասն ամեն ինչում, նաեւ այս հարցում աջակցում է Փաշինյանին, մյուս մասը, օրինակ՝ Արթուր Սաքունցը, Մեդիանախաձեռնությունների կենտրոնը, Հանրային լրագրության ակումբը, հայտարարություն էին տարածել՝ հորդորելով հրաժարվել այս նախագծից: Իսկ, օրինակ, Դանիել Իոաննիսյանը կողմ է եւ իշխանական քարոզչությամբ էր զբաղված այս հարցում:

Իրավապաշտպան **Զառա Հովհաննիսյանը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով վերոնշյալ օրենքների մասին, մասնավորապես՝ արտերկրում ապրող ՀՀ քաղաքացիներին ընտրական իրավունքից զրկելու մտադրության, ասում է. «Ընտրական իրավունքը բոլորի համար հավասար է եւ համընդհանուր: Եթե անձը որեւէ երկրում ժամանակավոր չբնակվելու դեպքում զրկվում է ընտրելու իրավունքից, որը հիմնարար իրավունքներից մեկն է, այդ թվում՝ համընդհանուր իրավունքներից մեկն է, ապա այս նախագիծը ոչ միայն հակասահմանադրական է, քանի որ ՀՀ սահմանադրության մեջ նշված է, որ բոլոր ՀՀ քաղաքացիներն ունեն ընտրելու իրավունք, այլեւ խտրական է, քանի որ ունի խտրականություն պարունակող որոշակի տարրեր: Եթե ինչ-որ մի խմբի սկսում ես բացառել, ապա շատ հեշտ է հաջորդիվ այլ խմբերի նույնպես բացառելը՝ նույն եղանակով, նույն պատճառաբանություններով: Ես հիշեցի, որ 100 տարի առաջ Եվրոպայում կանանց արգելված էր ընտրություններին մասնակցել, որովհետեւ նրանք կին էին.... ընտրական իրավունքի ցանկացած սահմանափակում իր ետեւից բերելու է տարբեր խմբերի բացառումներ, ինչը ես՝ որպես իրավապաշտպան, համարում եմ խիստ անընդունելի: Ասում են, որ իբրեւ այլ երկրից ուղղորդել են, որպեսզի գան եւ մասնակցեն ընտրություններին, սակայն նմանատիպ ռիսկերը չեզոքացնելու համար չի կարելի այսպիսի որոշումներ կյանքի կոչել: Եթե կա կոռուպցիա, ապա այն պետք է կարգավորվի քրեաիրավական գործիքակազմով, այլ ոչ թե իրավունքների սահմանափակմամբ: Այս պրոցեսն ուղղակի հակաիրավական է»:

Իսկ ինչո՞ւ են քաղհասարակության որոշ ներկայացուցիչներ կողմ այս հակասահմանադրական նախագծին, մեր զրուցակիցը շեշտեց. «Ես միայն իմ փոխարեն կարող եմ խոսել: Այլոց որոշումները թողնում եմ իրենց մեկնաբանության դաշտում, սակայն առնվազն մարդու իրավունքների եւ ժողովրդավարության սկզբունքների շրջանակներում մարդկանց իրավունքները սահմանափակելն այս կամ այն հատկանիշով, այդ թվում՝ երկրում չբնակվելու հանգամանքով, համարում եմ մարդու իրավունքների խախտում: Ի վերջո, պետք է հաշվի առնել այն փաստը, որ Հայաստանը մի երկիր է, որտեղից երիտասարդությունը մեկնում է արտերկիր՝ կրթվելու: Մարդիկ տարիներով մեկնում են աշխատանքի, քանի որ մենք շատ լավ գիտենք, որ մեր աշխատաշուկան սահմանափակ է: Ի վերջո, այդ որակյալ ու կիրթ զանգվածին ընտրության իրավունքից զրկելը չի կարող որեւէ արդարացում ունենալ: Գուցե հիմա էլ ասեն, որ կրթվելու նպատակով մեկնած երիտասարդներին թույլ են տալու մասնակցել ընտրությանը՝ որպես բացառություն, սակայն եթե մարդկանց սկսում ենք տարբերակել, ստացվում է, որ դա հստակ խտրականություն է՝ տարբեր խմբերի նկատմամբ»:

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ՆՈՒՅՆՆ Է, ՈՐ ԱՍԵՍ՝ ՏՈՒԼԱՆ ՀՀ-ԻՑ ՍԱՄԱՎԱՐ ԵՎ ՊՐՅԱՆԻԿ Է ՆԵՐԿՐԵԼՈՒ

«Հրապարակի» հարցերին պատասխանում է ադրբեջանագետ **Արմինե Ադիբեկյանը**:

- Բաքու կատարած այցից հետո՝ հինգշաբթի օրը, Հայաստան ժամանեց Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը: Նրան օդանավակայանում դիմավորեց ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանը, ապա օդանավակայանից ճանապարհեց Նիկոլ Փաշինյանը: Ֆոն դեր Լայենը, խոսելով այն մասին, որ Ռուսաստանը Հայաստանի դեմ սանկցիաներ է կիրառել, ասաց, որ եթե Ռուսաստանը փակի իր շուկան Հայաստանի արտադրանքի համար, Եվրոպական Միության 450 միլիոնանոց սպառողների շուկան կբացի իր դռները հայկական ապրանքների համար: Նաեւ խոստացավ ֆինանսական աջակցություն տրամադրել մեզ: Ինչի՞ մասին է այս հայտարարությունը, եւ ո՞րն էր այս այցի նպատակը:

- Ինչու Բաքու եւ հետո նոր Երեւան, որովհետեւ Եվրոպան Ադրբեջանի հետ ունի էներգետիկ եւ տեխնոլոգիական պայմանագրեր ու պրոյեկտներ: Եվրոպայի համար Ադրբեջանն է առաջնային բնույթ կրում, Ֆոն դեր Լայենն էլ գնացել էր Բաքու՝ ծախսած փողերի եւ ներդրումների մասին խոսելու: Հայաստանն այդ ստատուսը չունի, ինչու. որովհետեւ Հայաստանը Եվրոպայի հետ ընդամենը մանր առեւտրային հարաբերությունների մեջ է, ուստի Եվրոպա-Ադրբեջան երկխոսությունում Հայաստանը զուտ միջանկյալ հանգույցի կարգավիճակ ունի: Թրիփի միջանցք եւ այլն, այստեղ նույնպես Հայաստանը պրոցեսների լիարժեք ներկայացուցիչ չէ, հենց այս պատճառներով էլ Եվրոպայի համար կարեւորը Բաքուն է, այլ ոչ թե Երեւանը: Ֆոն դեր Լայենը Բաքվից տեղեկացել է, թե Ալիեւն ինչ դիրք է նախատեսել Հայաստանի համար, հետո նոր միայն ժամանել է Հայաստան, որպեսզի Հայաստանին ցույց տա իր տեղը՝ Եվրոպա-Ադրբեջան շահավետ համագործակցության մեջ:

- Ինչո՞ւ է Ֆոն դեր Լայենը խոստանում եվրոպական շուկան բացել Հայաստանի համար եւ դա կապում է խաղաղության գործընթացի հետ: Որքանո՞վ է իրատեսական այս խոստումը:

- Ներողություն այս արտահայտության համար, ուղղակի գեղեցիկ խոսքերով չեմ կարող այս ամենը բնորոշել՝ մուֆտա կուտ է տվել, այդքան բան՝ մուֆտա կուտ, որն անիմաստ է: Հայաստանն այն, ինչ կարող է վաճառել եվրոպական շուկայում, Եվրոպան արտադրում է: 450 միլիոնանոց շուկան արդեն վաղուց քվոտավորված է, իսկ եվրոպացիները վաղուց ստիպված են արտադրանքի ծավալը նվազեցնել, որպեսզի քվոտաները կարողանան ճիշտ օգտագործել: Մի օրինակ բերեմ՝ Բուլղարիան իր սննդամթերքը կարող է արտադրել այնքան, որքան ցանկանում է, սակայն ընդհանուր եվրոպական շուկա կարող է ներմուծել 5 տոննա լոլիկ, քանի որ այնտեղ քվոտավորված է արտադրությունը: Սխեման այսպիսին է: Հայաստանին քվոտա տալու համար Եվրոպան մեկ այլ երկրից պետք է վերցնի քվոտան կամ նվազեցնի: Ես ուզում եմ հիշեցնել, որ հոլանդական կաթնամթերք արտադրող ընկերությունները, որոնք սպասարկում էին եվրոպական շուկան, իսկ ավելցուկը տալիս էին Ռուսաստանին, այն պահից, երբ Ռուսաստանն ընկավ սահմանափակումների տակ, նրանք չկարողացան իրենց ապրանքը վաճառել: Իսկ Եվրոպան նրանց ծախսերը չկոմպենսացրեց: Եվրոպացի արտադրողները հոլանդական կարագը եւ պանիրը լցրել էին փողոցները եւ ասում էին՝ կերեք, վաճառել չենք կարողանում: Ռուսական շուկան շատ ավելի նախընտրելի է:

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ Հայաստանն արտադրում է այնպիսի մթերքներ, որոնք քիչ են ՌԴ-ում: ՌԴ-ն հյուսիսային երկիր է: Ռուսները սահմանափակ տարածքներում են կարողանում գյուղմթերք արտադրել, միայն ՌԴ հարավում, լոլիկ, վարունգ եւ այլն: Ռուսաստանը միայն այդ տարածքների աշխատանքով չի կարող հյուսիսային մարզերին կերակրել: Իսկ ինչ վերաբերում է Եվրոպային, ապա այդ նույն միրգ-բանջարեղենն արտադրվում է Հարավային Եվրոպայում, մսամթերքն արտադրվում է Հյուսիսային Եվրոպայում: Այնպես որ՝ Եվրոպան սննդի առումով բավականին ինքնաբավ է, իսկ եվրոպական շուկան խիստ սահմանափակ է: Ռուսաստանը թեպետ չունի 450 միլիոնանոց շուկա, սակայն այնտեղ պահանջարկը շատ ավելի մեծ է, քան Եվրոպայում: Ծաղիկների պատմությունն էլ դրա վառ օրինակն է: Ասում են՝ Հոլանդիան Հայաստանից վարդեր է ներկրելու, լմ՛ւրջ: Դա նույնն է, որ ասես՝ Տուլան Հայաստանից սամավարներ եւ պրյանիկներ է ներկրելու:

ՀԱՅԱՏԱՌՈՒ

ՓՈՂ Է ՈՒԶՈՒՄ, ՇԱՏ ՓՈՂ

Նիկոլ Փաշինյանը ընտրությունների վրա հսկայական փող է ծախսել, ոչ միայն պետական, ամենայն հավանականությամբ՝ նաեւ սեփական միջոցներից: Խոսքը տասնյակ միլիոնների մասին է: Հիմա, երբ արդեն հայտարարել է իր հաղթանակի մասին, որպես հաղթող, մտածում է ծախսած փողը հետ բերելու մասին: Իսկ որտեղից պետք է հետ բերի ծախսած փողը, ո՞ւմ հաշվին, իհարկե՝ պարտվողների, պարտվողներն են վճարում հաղթողների համար:

Միայն հունիսի 2-ին, առաջին հայացքից իրար հետ կապ չունեցող, բայց միմյանց հետ օրգանապես շաղկապված մի քանի իրադարձություն տեղի ունեցավ: Հակակոռուպցիոն կոչվող դատարանը բավարարեց դատախազության միջնորդությունը՝ կապի եւ տրանսպորտի նախկին նախարար Գագիկ Բեգլարյանի կալանքի ժամկետը երկարացվեց եւս երկու ամսով, ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանի որդու եւ եղբորորդու նկատմամբ խափանման միջոց ընտրվեց կալանքը, իսկ նրանց մուծած 200 միլիոն դրամ գրավը ճանաչվեց պետական եկամուտ, դատարանները կալանավորեցին գնդապետ Էդիկ Մալոյանին եւ Ռոման Ջավադյանին՝ իբրեւ թե պետական գաղտնիք հրապարակելու համար: Թե ինչ պետական գաղտնիքի մասին է խոսքը, այնքան էլ պարզ չէ, որովհետեւ, եթե այն հրապարակվել է, այլեւս գաղտնիք չէ, եւ քննչական կոչվող կոմիտեն կարող էր հայտնել, թե հատկապես որ գաղտնիքի մասին է խոսքը: Ամենայն հավանականությամբ, այդ գաղտնիք կոչվածը կապ ունի ընտրությունների հետ՝ իշխանության կազմակերպած ընտրակեղծարարության: Իսկ Նիկոլ Փաշինյանն իր ճեպազրույցում հայտարարեց, որ Ռոբերտ Քոչարյանը պետք է նստի. «Ով ինչ ուզում է ասի, Ռոբերտ Քոչարյանը պիտի նստի, ժողովուրդն ինձ է ասել դա»: Թե որ ժողովրդի մասին է խոսքը՝ իրենց տան ժողովրդի, ՔՊ վարչությունում հավաքվող ժողովրդի, թե իր կողմից պարտադրանքով եւ սպառնալիքով հրապարակներ բերված ժողովրդի, Փաշինյանը չի հստակեցրել: Պատկերն ամբողջական դարձնելու համար ավելացնենք, որ ԿԸՀ-ն անձեռնմխելիությունից արդեն իսկ զրկել է Ռոբերտ Քոչարյանին եւ Գագիկ Ծառուկյանին, ինչն ակնարկ է, որ նրանց ցանկացած պահի կարող են կալանավորել, բայց դեռ չեն կալանավորել, իսկ Սամվել Կարապետյանն էլ արդեն մեկ տարուց ավելի է՝ գտնվում է կալանքի տակ:

Այս ամենը ոչ մի կապ չունի արդարության կամ արդարադատության հետ, ուղղակի Փաշինյանը գիտի, թե ինչպես կապիտալիզացնել, կանխիկ փողի վերածել այս կալանքներն ու կալանքի, նստելու եւ նստեցնելու սպառնալիքները: «Ուժեղ Հայաստան» կուսակցության նախագահ Սամվել Կարապետյանի հարյուրավոր կողմնակիցներ գտնվում են կալանքի տակ, Էդիկ Մալոյանը եւս նրա կողմնակիցն էր, այդ մարդկանց բանտային ծախսերը, ենթադրաբար, հոգում է Կարապետյանը: Որպես պարկեշտ մարդ՝ Կարապետյանը չի կարող այդ մարդկանց բանտային ծախսերի հոգսը թողնել միայն նրանց ընտանիքների վրա, եթե ընտանիքները նյութապես անապահով են, շատ դեպքերում օգնություն է տրամադրվում նաեւ ընտանիքներին: Ես տեղեկություն չունեմ, բայց սովորաբար մարդիկ հենց այդպես են վարվում. երբ իրենց կոչով մարդիկ փողոց են դուրս գալիս եւ հայտնվում են իշխանության մամլիչի տակ, կոչ անողներն իրենց բարոյական պարտավորությունն են համարում օգնել նեղության մեջ հայտնվածներին: Այդպես է եղել միշտ, եւ չեմ կարծում, որ հիմա իրավիճակը փոխվել է: Անգամ ընտրություններից հետո Փաշինյանը չի հանդարտվում եւ նոր մարդկանց է կալանավորում, դրանով նա Կարապետյանին ուզում է ասել, որ նրա ծախսային բեռը չի թեթեւանալու, միայն աճելու է: Հասկացնում է՝ ավելի լավ է մի անգամ ինձ մուծվես մի կլորիկ գումար, քան ամիսներ, գուցե տարիներ շարունակ վճարես հարյուրավոր մարդկանց բանտային ծախսերը, ինչն անհեռանկար գործ է:

Նույնն ասում է Ռոբերտ Քոչարյանին, Գագիկ Ծառուկյանին, Գագիկ Բեգլարյանին, Գագիկ Խաչատրյանին եւ նրանց ընտանիքների անդամներին՝ ուզո՞ւմ եք վայելել ազատությունը, պետք է ինձ վճարեք: Հնարավոր է, որ դուք հանցանք չեք գործել, հնարավոր է, որ դատախազությունը կամ դատարանները չեն կարողանում ապացուցել ձեր գործած հանցանքները, բայց դուք պետք է նստեք, որովհետեւ ինձ այդպես ասել է ժողովուրդը: Ես էլ ժողովրդի ասածը փոխանցում եմ իմ ենթակա քննիչներին ու դատավորներին, եւ նրանք հնազանդորեն կատարում են իմ հրահանգները: Արդարադատության վրա հույս չդնեք, ժողովուրդն է ասել, որ պետք է նստեք, իսկ ժողովրդից ձեզ կարող եմ ազատել միայն ես:

Նիկոլ Փաշինյանի համար սա նոր մեխանիզմ չէ, նստեցնելու, բանտերում պահելու սպառնալիքներով՝ նա միլիոնավոր, միլիարդավոր դոլարներ է հավաքել, այդ թվում եւ վերոնշյալ մարդկանցից կամ առնվազն նրանց մի մասից: Հիմա ուղղակի նույն մեխանիզմը կիրառվում է հերթական անգամ. ազատությունը եւ ունեցվածքը պահելու համար պետք է վճարեք, շարունակաբար վճարեք՝ ես հաղթել եմ, դուք պարտվել եք, դուք պետք է վճարեք իմ կատարած

ծախսերի դիմաց: Առաջիկայում մենք կտեսնենք այլ կալանավորումներ եւ կալանքի սպառնալիքներ եւս, որովհետեւ Փաշինյանը կուզենա ոչ միայն հետ բերել ծախսած փողը, այլ մի բան էլ օգուտով դուրս գալ: Փողը նրա կյանքի միակ սերն է, ապրելու եւ ստեղծագործելու գուցե միակ մոտիվացիան:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՍԵՂԱՆԻ ՀԵՏԵՎՈՒՄ 3 ԳԼՈՒԽ՝ ԿՈՆՋՈՐՅԱՆ, ՌՈՒԲԻՆՅԱՆ, ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Թերթում կարդացի, որ Ալեն Սիմոնյանի կողմնակիցները ճամպրուկներն են հավաքում, որպեսզի տեղ բացվի Ռուբեն Ռուբինյանի կողմնակիցների համար: Ինչ ասեմ, ճամպրուկներ հավաքելը լավագույն զբաղմունքը չէ, եթե չես պատրաստվում նոր բնակարան տեղափոխվել կամ բնակության մեկնել շատ ավելի լավ երկիր, քան քո իսկ ձեռքով կործանման եզրին հասցված երկիրն է: Թե ուր են պատրաստվում գնալ Ալեն Սիմոնյանի կողմնակիցները, ոչ ոք չգիտի: Ինձ թվում է, որ նրանք ուղղակի արժանացել են Նիկոլ Փաշինյանի բոլոր այն կողմնակիցների ճակատագրին, որոնց նա մինչեւ վերջ օգտագործում, ապա, օրվա կուրսով պայմանավորված, դեն է նետում որպես անպետք իր:

Հարցին կարող ենք նաեւ այս տեսանկյունից մոտենալ: Նիկոլ Փաշինյանը կամ, ինչպես Ալեն Սիմոնյանն է ասում, ՔՊ վարչությունը կփոխո՞ւմ ԱԺ նախագահին, եթե ՔՊ-ն ԱԺ-ում ստացած լիներ այն մեծամասնությունը, որի մասին երազում էր հունիսի 7-ին: Չեմ կարծում: Քաղաքականության մեջ կա մի անխախտ սկզբունք՝ «մի բզբզիր»: Բժշկական լեզվով սա նշանակում է՝ «մի վնասիր»: Ալեն Սիմոնյանը, լավից-վատից, հարմարվել էր ԱԺ նախագահի աթոռին, իր շուրջը որոշակի աուրա էր ստեղծել, որից օգտվելով էլ՝ Փաշինյանը համարձակվում էր գալ ԱԺ հարցուպատասխանների: Ինչ կլինի Ալենից հետո, մանավանդ՝ երբ քաղաքական մեծամասնության դիրքերն էլ այսպես խարխլվել են, դժվար է գուշակել: Ռուբեն Ռուբինյանն ԱԺ-ն ղեկավարող ա՞, սեղան նստող ա՞, կենաց ասող ա՞… Եվ կամ ռուսները, որոնց հետ Փաշինյանը փորձում է սիլի-բիլի անել հետընտրական այս փուլում… Ռուսները չե՞ն ասի՝ այ Նիկոլ Վավաեւիչ, մեր Ալենին տարել, էս ո՞ւմ ես բերել… Այդ Ռուբեն Ռուբինյանը, ախր, այնքան անբռնազբոս թրքամետ է… Համարյա՝ Քըլըչ-կրտսեր, մենք նրա հետ ինչպե՞ս ենք հարաբերվելու, դուք ինչպե՞ս եք պատկերացնում Ռուբինյան-Մատվիենկո հանդիպումները…

Իսկ այժմ մի պահ պատկերացրեք ԱԺ նախագահության «պոդիումը», որտեղ բարձր սեղանի հետեւից երեւում է երեք գլուխ հետեւյալ հերթականությամբ՝ Կոնջորյան, Ռուբինյան, Ալեքսանյան… Հակահայկականության կատարյալ հավաքածու՝ Հայաստանի Հանրապետության ծռտի քարտեզի ֆոնին: Ճիշտ կլինի ասել՝ սեղանի վրա դրված անօդաչու թռչող սարքեր, որոնք պատրաստ են Նիկոլի հրահանգով թռնել ում դեմքին ասես, ինչ այլանդակ բառապաշարով ասես, ինչ «մարտավարությամբ» ասես: Վահագն Ալեքսանյանը, օրինակ, կարող է անգամ նախագահության սեղանի հետեւից քացի գցել, իսկ Կոնջորյանին ոչինչ չի խանգարում փոխնախագահի աթոռից շատ ավելի հաճախ ու ավելի խոր լկտիանալ, քան սովորական պատգամավորի աթոռից էր անում դա: Ռուբինյանն ի՞նչ պետք է սովորի նրանցից… Ժողովուրդն ասում է՝ ձին ձիու կողքը կապես՝ կամ կծել կսովորի, կամ քացի գցել: Սրան ավելացրեք նաեւ Քըլըչից սովորածները, ու պատկերը լրիվ կամբողջանա:

Ինչպե՞ս կընդունի ընդդիմությունն այս փոփոխությունը, եթե ՍԴ-ն այսօր այնպիսի որոշում չկայացնի, որից պարզվի, որ Նիկոլը շտապել է ԱԺ նոր նշանակումների հարցում: Այո, ընդդիմադիրները կվերցնեն մանդատները, այո, կգան խորհրդարան եւ… Եվ կինոն հենց այդտեղ էլ կսկսվի: Մի բան է ամեն առիթով անվտանգության ուժեր հրավիրող Ալեն Սիմոնյանի հետ գործ ունենալ, մեկ այլ բան՝ «բեսպրեդելշչիկների» նոր եռյակի: Ես չեմ բացառում, որ անվտանգության ուժեր հրավիրելու հերթը հասնի ընդդիմությանը, որպեսզի ԱԺ դահլիճում մարդակերության դեպքեր չգրանցվեն: Ի՞նչ իմանաս, Նիկոլը գուցե հենց այս տրամաբանության մե՞ջ է Ռուբինյանին, Կոնջորյանին եւ մանավանդ Ալեքսանյանին տեղավորել ԱԺ նախագահության պոդիումի վրա:

Այսօր նշանավոր օր է մեր երկրի նոր անկախության պատմության մեջ: ՍԴ-ն պետք է հրապարակի մի վճիռ, որով կորոշվի, թե ինչպես ենք ապրելու առաջիկա 5 տարիներին՝ Նիկոլի՞ հետ, թե՞ առանց Նիկոլի: Եթե պարզվի, որ ՍԴ-ն խոտանել է Նիկոլ Փաշինյանի եւ Վահագն Հովակիմյանի «կազմակերպած ընտրությունները», իսկ դա այսօր ամենանորմալ վերդիկտն է, որ կարող է կայացնել, ապա կպարզվի, որ Ալեն Սիմոնյանը ճիշտ ժամանակին է թռել՝ չսպասելով,

որ Նիկոլն ու ՔՊ-ն փլվեն իր գլխին: Նման հեռատեսության համար ես սիրով կշնորհավորեի Ալեն Սիմոնյանին, եթե նա 8 երկարուձիգ տարիներ Նիկոլի աջ ձեռքն ու ականջը եղած չլիներ եւ նրա հետ հավասար չկիսեր Արցախի ու Հայաստանի հետ կապված այս «մեծ էշության» ողջ պատասխանատվությունը: Մինչդեռ, ես ընդամենը կարծում եմ, որ Ալենն այս քայլով փոքր-ինչ թեթեւացրեց իր վիճակը եւ ապահովագրեց իրեն Փաշինյանի հետ նույն դատավճռին արժանանալուց: Նկատի ունենանք նաեւ, որ ՍԴ-ն իր վերդիկտով կարող է Փաշինյանին թույլ տա՝ ավարտին հասցնելու Հայաստանի կործանումը: Այդ վճիռը, սակայն, չի փոխում իրավիճակը: Փաշինյանը, միեւնույն է, շուտով հեռացվելու է, իսկ Ալեն Սիմոնյանն այդ ժամանակ արդեն բավականին հեռու կլինի:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՀԱՅՐԱՊԵՏ

ԴԱ ՀԻՇԵՑՈՒՄ ԷՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՆԿԱՐԱՅԻՆ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Քաղաքագետ Ալեքսանդր Ցինկերը հայտարարել է. ուրախ է, որ Իսրայելի կառավարությունը պաշտոնապես ճանաչել է 1915 թվականին Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանությունը: Այս մասին նա ասել է «Ալֆանյուզի» եթերում: Նա ասել է, որ այն պահից ի վեր, երբ ժամանել է Իսրայել, ամեն բան արել է հանուն դրա, ինչ որ կարողացել է՝ այլ հանրային գործիչների ու պատգամավորների հետ միասին:

«Մեզ մոտ դա աստիճանաբար էր կուտակվում: Օրինակ, իսրայելական դասագրքերում շատ է խոսվում հայ ժողովրդի ողբերգության մասին, թեեւ միշտ չէ, որ կիրառվում է «ցեղասպանություն» եզրույթը: Քաղաքներում կան հուշարձաններ, հիշատակի վայրեր: Օրինակ՝ Փեթախ-Թիքվայում կանգնեցվել է Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձան, Հայֆայում կա հրապարակ, որը նվիրված է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Կարծում եմ, սակայն, որ այստեղ իր դերակատարումն ունեցել է «ռեալպոլիտիկը»՝ որոշակի ստատուս-քվոն, որը կար Իսրայելի եւ Թուրքիայի միջեւ՝ դեռ 1980-ական թվականներից: Դա է, որ տեւական ժամանակ թույլ չի տվել, որ այս հարցում առաջ գնանք»,- նշել է Ցինկերը:

Նա նկատել է, որ այժմ Իսրայելի կառավարության քայլը Թուրքիայի դիրքորոշման պատասխանն է: «Վերջին շրջանում, հատկապես 2023 թվականի հոկտեմբերի 7-ից հետո, վերջնականապես պարզ դարձավ, թե ով որ կողմում է գտնվում: Թուրքիան, մասնավորապես, խախտեց բոլոր կարմիր գծերը եւ ստանձնեց հակաիսրայելական ուղղության ղեկավարումը: Ավելին, վերջին շրջանում Թուրքիայի նախագահ Թայիփ Էրդողանը սկսել է բացահայտ սպառնալ, որ կոչնչացնի Իսրայելը: Դրա համար էլ, կարելի է ասել, նախկին սահմանափակումները եւ ստատուս-քվոն խախտվել են, եւ ի հայտ է եկել անելու այն, ինչն իսրայելական հասարակությունը շատ վաղուց է արել: Բոլոր հարցումներով, Իսրայելում հասարակության 80 տոկոսը կարծում է, որ Հայոց ցեղասպանությունը եղել է, եւ այն ճանաչում են որպես պատմական փաստ: Կարծում եմ, որ պարզապես հարմար պահն է վրա հասել: Ցավոք՝ ուշ: Ես կուզենայի, իհարկե, որ դա ավելի շուտ լիներ: Սակայն որոշումը հիմա է կայացվել: Ընդ որում, դա առաջին հերթին կայացվել է հենց Իսրայելի համար, հանուն պատմական հիշողության հաստատման: Նախկինում որոշակի քաղաքական սահմանափակումներ կային, հիմա մաքուր խղճով կարելի է ամրագրել այդ պատմական դիրքորոշումը: Երկրորդ. դա տուրք է ցեղասպանության ժամանակ զոհված հայերի ազգականներին ու շառավիղներին: Եվ երրորդ. ինչպես շատ մասնագետներ են ասել, դա որոշակի ազդակ է Անկարային, որն անընդհատ Իսրայելին մեղադրում է Գազայում պաղեստինցիների ցեղասպանություն իրականացնելու մեջ: Յուրատեսակ պատասխան Անկարային եւ հիշեցում, որ Իսրայելը հիշում է 1915 թվականի իրադարձությունները եւ այն ցեղասպանությունը, որն Օսմանյան կայսրությունում իրականացվել է, որի իրավահաջորդն է ժամանակակից Թուրքիան»,- ասել է Ցինկերը:

Արեւելագետ, միջազգայնագետ Օլեգ Մակարենկոն էլ կարծում է, որ Իսրայելը հենց այնպես ոչինչ չի անում եւ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում հետապնդում է որոշակի շահեր: Նա նաեւ անդրադարձել է ԵՀ նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի՝ Բաքու եւ Երեւան կատարած այցին: «Պետք է նկատի ունենանք, որ Միացյալ Նահանգներում հայկական սփյուռքը բավականաչափ ազդեցիկ է ու շատ ուժեղ: Համեմատելի է իսրայելականի հետ: Հետեւաբար, «ամերիկյան տրեքի» օգտագործումը, որով հրեական լոբբիից բացի նաեւ հայկական լոբբիի աջակցությունը կարող ես վայելել, շատ հետաքրքիր ու շահավետ կլիներ: Իսրայելական պետությունը հենց այնպես ոչինչ չի անում: Այն, ինչ մենք հիմա տեսնում ենք, մի խաղի բաղադրիչն է, որի նպատակն այն է, որ Իսրայելը կարողանա ավելի հեշտորեն իրականացնել իր քաղաքականությունը՝ լինի դա Լիբանանում, Գազայում կամ այլուր: Դա Իսրայելի գլոբալ ռազմավարության մի մասն է, որի վերջնական նպատակը մեծ իսրայելական պետության ստեղծումն է, որի մասին երազում են հրեաները: Դրա համար էլ կարծել, թե Իսրայելը հայ ժողովրդի կողքին է կանգնած, կարիք չկա: Այնտեղ միշտ ամենից առաջ մտածում են սեփական շահի մասին»,- ասել է փորձագետը:

Անդրադառնալով Հարավային Կովկաս՝ Բաքու եւ Երեւան ԵՀ նախագահի այցին՝ Մակարենկոն կարծիք է հայտնել, որ այդ այցը Հայաստանի իշխանությունների վարած պրոեվրոպական քաղաքական գծի հանդեպ համերաշխություն հայտնելու համար է: Նրա կարծիքով, Հայաստանի իշխանությունները ներկայում բարդ վիճակում են գտնվում՝ հաշվի առնելով ԵԱՏՄ անդամակցության կոնտեքստը: Նա հիշեցրել է, որ Հայաստանը կարող է կորցնել այն արտոնությունները, որոնք ունի որպես ԵԱՏՄ անդամ, եթե դուրս գա Միությունից, իսկ դա շատ ցավոտ կարող է լինել: Դրա համար էլ Եվրոպայի համար շատ կարեւոր է, որ Հայաստանի հասարակությանը ցույց տա, որ Եվրոպան Հայաստանի կողքին է: Նա կարծում է, որ Եվրոպան այժմ շոշափում է տրամադրությունները նաեւ Ադրբեջանում, հատկապես այդ երկրի էլիտաների մոտ: Մակարենկոյի կարծիքով, Եվրոպան ուզում է ադրբեջանական էլիտաներին պոկել Էրդողանի ճանկերից:

ՈՒՐԻՇ ՏՂԱՄԱՐԴՈՒ ԿՈՂՔԻՆ ՉԷԻ ԿԱՐՈՂ ՆՍՏԵԼ՝ ԱՄՈՒՍՆՈՒՍ ՎԱՐՈՐԴ ԵՄ ԸՆԴՈՒՆԵԼ



Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Գորիսի պետական բազմագործառութային քոլեջի տնօրեն Արմինե Կոլյանը, որը 2025 թվականի դեկտեմբերի 2-ին նշանակվել է տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, հենց նույն ամսում իր ամուսնուն աշխատանքի է տեղավորել քոլեջում՝ որպես վարորդ: Քանի որ քոլեջում դեմ են եղել նրա նշանակմանը, խոշորացույցի տակ են առել բոլոր քայլերն ու որոշումները, եւ աշխատողներն ասում են, որ Կոլյանի ամուսինն այդ ամսին աշխատանքի չի գնացել, սակայն Ամանորի նախաշեմին աշխատավարձի հետ միասին իրենց հետ նաեւ պարգեւավճար է ստացել: Նաեւ պատմում են, որ տնօրենը, առանց կառավարման խորհրդի որոշման, իր աշխատավարձը բարձրացրել է՝ 570 հազար դրամ է ստանում: Նրա մայրը՝ Միրզոյան Ալվարդը, որը 78 տարեկան է եւ երկար տարիներ աշխատել է քոլեջում, աղջկա նշանակվելուց հետո այլ աշխատանք էլ է կատարել, եւ այդ հաստիքի աշխատավարձն էլ է գումարվել հիմնական աշխատավարձին: Քոլեջին պատկանող ծառայողական «Նիվա» ավտոմեքենան տնօրենը չի օգտագործել, ուղղակի քոլեջի կողմից ձեռք բերված բենզինով իր մեքենան է լիցքավորել եւ օգտվել դրանից:

Մենք **Արմինե Կոլյանին** հարցրինք՝ իսկապե՞ս Ձեր մայրը եւ ամուսինը քոլեջում են աշխատում: «Այո, մայրս ագրոնոմ է, 50 տարի է արդեն, որ աշխատում է քոլեջում, դասախոս է: Ամուսինս իմ վարորդն է: Երբ ես նշանակվեցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, այդ ժամանակ էլ ամուսինս եղավ իմ վարորդը: Մենք այնպիսի տեղ ենք ապրում, փոքր քաղաքում ենք ապրում, անընդհատ ուրիշ տղամարդու կողքին նստել, միգուցե մի քիչ հետամնաց բան եմ ասում, բայց ավելորդ խոսակցություններ որպեսզի չլինեն, որպեսզի ես ավելի ազատ լինեմ, երբ ուզեմ, որտեղ ուզեմ գնալ աշխատանքային այցով, միասին գնանք»: Ծառայողական մեքենայո՞վ եք գնում: «Քոլեջն ունի մեքենա, այդ մեքենան անսարք է, գտնվում է տեխնիկական սպասարկման կենտրոնում: Այս պահին օգտագործում եմ իմ մեքենան»: Ձեր մեքենան Ձեր աշխատավարձի՞ց եք լիցքավորում: «Այո, այո»: Ասում են, որ քոլեջի բյուջեից գնումներ են կատարվում, այդ թվում՝ նաեւ բենզին է գնվում, ինչո՞ւ չեք օգտվում այդ բենզինից: «Երբ «Նիվան» կցված էր քոլեջին, մենք լիցքավորել ենք պետության հաշվին, երբ անսարք եղավ, սկսեցի վարել իմ մեքենան: Մի խնդիր կա այդ մեքենայի հետ, որ չեն կարողանում լուծել: Մենք նաեւ ունենք «Գազել» մեքենա, որը եւս բենզինով է, ամեն օր այդ մեքենան ուսանողներին տանում է գյուղեր՝ պրակտիկաների»: Վերջում խնդրեցինք Արմինե Կոլյանին՝ մեզ տրամադրել տնօրեն աշխատելու հավաստագրի պատճենը: Պարզվեց՝ հավաստագիրը տրվել է 2025 թվականի սեպտեմբերի 19-ին, իսկ դեկտեմբերի 2-ին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը նրան նշանակել է տնօրենի ԺՊ: Քոլեջի աշխատողները պնդում են, որ Արմինե Կոլյանն իր նշանակումից հետո՝ 6 ամսվա ընթացքում 1200 լիտր բենզին է օգտագործել, իսկ քոլեջին պատկանող մեքենան մեկ ամսից ավելի սարքին վիճակում է՝ սպասարկման կենտրոնում:

Նախընտրական բլեֆ

ԱԺ ընտրություններից առաջ՝ մարտին, Տավուշի սահմանամերձ գյուղերի վարչական ղեկավարները մարզպետի աշխատակազմից ստացված ցուցումով հաշվառում էին առանձնատների, տարբեր շինությունների ասբոշիֆերով ծածկերը, որ դրանք փոխարինեն մետաղյա թիթեղներով: Բնակչությանն ասել էին, որ ասբեստից շիֆերները քաղցկեղածին են, պետությունն իր հաշվին փոխելու է, մարդիկ էլ ուրախացել էին: Մարտի 19-ին այդ ծրագրի վերաբերյալ հարցում էի արել տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն, որտեղից հայտնել էին. «ՀՀ ՏԿԵՆ-ը մշակում է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է քննարկել ասբեստից պատրաստված տանիքների ծածկաթիթեղները փոխարինելու հարցը՝ դիտարկելով անհատական բնակելի տների, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող շենքերի ու շինությունների ասբեստից տանիքների փոխարինման աշխատանքների համար ներգրավված վարկերի տոկոսադրույքը սուբսիդավորելու հնարավորությունը, իսկ բազմաբնակարան շենքերի հին տանիքները սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում համաֆինանսավորելու հնարավորությունը: Նախնական հաշվառում, որոշակի հաշվարկներ իրականացնելու եւ ծրագրին նախնական գնահատական տալու նպատակով համապատասխան հանձնարարական է ուղարկվել ՀՀ մարզպետներին եւ հանձնարարվել է ՏԿԵ նախարարություն ներկայացնել տեղեկատվություն ասբեստից տանիք ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի, անհատական բնակելի տների, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող շենքերի եւ շինությունների եւ պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի վերաբերյալ: Անհրաժեշտ ուսումնասիրությունների եւ քննարկումների ավարտից հետո միայն նախագիծը կշրջանառվի, եւ կհստակեցվեն ժամկետներն ու պայմանները»:

Հունիսի 22-ին նոր հարցում եմ արել ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանին. «Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի տների, շինությունների ասբոշիֆերից ծածկերը հունիսի 19-20-ի կարկտահարությունից մեծապես վնասվել են, այդ ծածկերը փոխելու վերոհիշյալ ծրագիրը ե՞րբ կիրականացվի»: Փոխնախարար Ավետիք Դարբինյանը հայտնել է. «ՀՀ կառավարության «Ասբեստից տանիքների փոխարինման «Առողջ տանիք» ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագիծը գտնվում է քննարկման փուլում»: Այսինքն, 4 ամիս է՝ որոշման նախագիծը կառավարությունում քննարկում են:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՃԱՆԱՉՈՒՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ՞Ո ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱԴԱՐՁ

Վերջին օրերին աշխարհի լրատվամիջոցներում, փորձագիտական շրջանակներում եւ հասարակական հարթակներում ամենաքննարկվող թեմաներից մեկը դարձել է Իսրայելի կառավարության՝ Հայոց ցեղասպանության ճանաչման որոշումը: Այն, ինչ դեռ երեկ շատերին թվում էր գրեթե անհնար, այսօր արդեն իրականության շեմին է: Սակայն որքան մեծ է այդ լուրի պատմական հնչեղությունը, այնքան ավելի շատ հարցեր են ծագում դրա հետ կապված: Այո, Իսրայելի կառավարությունը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, բայց ամբողջական գործընթացը դեռ ավարտված չէ՝ դեռ պետք է Իսրայելի Կնեսետը ճանաչի այն: Այնուամենայնիվ, սա պատմական շրջադարձ է, որովհետեւ տասնամյակներ շարունակ Իսրայելի կառավարությունները խուսափում էին այդ քայլից՝ հիմնականում Թուրքիայի հետ հարաբերությունները չվատթարացնելու նպատակով:

Արձագանքները խիստ տարբեր են. Իսրայելի իշխանությունները հայտարարում են, որ սա իրենց բարոյական եւ պատմական պարտքն էր, եւ պատմական փաստերը չեն կարող անվերջ ժխտվել: Թուրքիան այս որոշումը գնահատել է որպես քաղաքական քայլ եւ հայտարարել, որ այն պայմանավորված է թուրք-իսրայելական լարվածությամբ: Հայաստանի վարչապետ Փաշինյանը փորձել է թեման շրջանցել՝ ընդգծելով, որ Իսրայելի կողմից ցեղասպանության ճանաչումը կարող է «զենքայնացնել» թեման: Մի շարք վերլուծաբաններ կարծում են, որ բարոյական մոտիվացիան իրական է, բայց ժամանակի ընտրությունը դժվար է առանձնացնել ներկայիս տարածաշրջանային հակասություններից: Այսպիսով, այսօր գոյություն ունի երկու հիմնական մեկնաբանություն: Առաջինը՝ Իսրայելն ուշացած, բայց ճիշտ քայլ է կատարում: Երկրորդը. ճանաչումը համընկնում է Թուրքիայի հետ հարաբերությունների կտրուկ վատթարացման հետ եւ ունի նաեւ քաղաքական հաշվարկ: Այս երկու մեկնաբանությունները պարտադիր չէ, որ իրար բացառեն:

Ինչ կարող է տալ ճանաչումը Հայաստանին. եթե Կնեսետն էլ հաստատի որոշումը, Հայաստանը կարող է ստանալ մի քանի կարեւոր արդյունք. պատմական արդարության հերթական միջազգային հաստատում, ցեղասպանության փաստի միջազգային ընդունման շրջանակի ընդլայնում, ժխտողականության դեմ լրացուցիչ փաստարկ, ակադեմիական եւ կրթական ոլորտներում թեմայի ավելի լայն ներկայացում, բարոյահոգեբանական նշանակություն սփյուռքի եւ Հայաստանի համար: Սակայն եկեք իրատես լինենք. չի կարելի ակնկալել, որ ճանաչումն ինքնին կբերի տարածքային փոփոխությունների, փոխհատուցումների, Թուրքիայի քաղաքականության կտրուկ շրջադարձի, Հայաստանի անվտանգության ամրապնդման: Դրանք բոլորովին այլ իրավաքաղաքական գործընթացներ են:

Ինչ է շահում Իսրայելը. բարոյական հեղինակության ամրապնդում, սեփական հասարակության ներսում պատմական արդարության գաղափարի պաշտպանություն, Թուրքիայի նկատմամբ քաղաքական ճնշման լրացուցիչ միջոց, արտաքին քաղաքական ազդակ՝ ցույց տալու, որ Անկարայի հետ նախկին սահմանափակումներն այլեւս չեն գործում: Այս ամենը չի նշանակում, որ որոշումը բացառապես շահարկում է: Պետությունների որոշումները սովորաբար ունեն եւ արժեքային, եւ քաղաքական բաղադրիչներ:

Ինչո՞ւ հենց այսօր: Սա ամենահետաքրքիր հարցերից է: Վերջին տարիներին Իսրայել-Թուրքիա հարաբերությունները զգալիորեն վատթարացել են, Գազայի պատերազմի շուրջ երկու երկրների միջեւ առաջացել է խոր հակամարտություն, փոխադարձ մեղադրանքները դարձել են շատ ավելի կոշտ: Այդ պայմաններում նախկին քաղաքական արգելքը վերացել է: Սակայն ասել, թե միայն այդ պատճառով է որոշումը կայացվել, նույնպես բավարար ապացույցներ չունենք: Հուսանք, որ միաժամանակ գործել են թե՛ բարոյական, թե՛ ռազմավարական պատճառները:

Արդյո՞ք Կնեսետը կճանաչի: Այս պահին ոչ ոք չի կարող դա վստահ ասել: Կառավարության միաձայն որոշումը մեծացնում է հավանականությունը, բայց խորհրդարանն իրավաբանորեն ինքնուրույն մարմին է: Հետեւաբար, այսօր ամենաճիշտ պատասխանն է. հավանականությունը բարձրացել է, սակայն վերջնական արդյունքը դեռ հայտնի չէ: Եվ պետք չէ մոռանալ ՀՀ իշխանությունների արձագանքը, որը կարող է նաեւ վնասել գործընթացի շարունակմանը:

Կլինի՞ արդյոք սա վերջնական ճանաչումը. իրավական առումով՝ ոչ: Խորհրդանշական առումով՝ այո, բավական մեծ չափով: Պատճառը պարզ է. Իսրայելը հրեական ժողովրդի ազգային պետությունն է, որի ինքնության կարեւորագույն խաղարձ մեղադրանքները դարձել են շատ ավելի կոշտ: Այդ պայմաններում նախկին քաղաքական արգելքը վերացել է: Սակայն ասել, թե միայն այդ պատճառով է որոշումը կայացվել, նույնպես բավարար ապացույցներ չունենք: Հուսանք, որ միաժամանակ գործել են թե՛ բարոյական, թե՛ ռազմավարական պատճառները:

Արդյո՞ք Կնեսետը կճանաչի: Այս պահին ոչ ոք չի կարող դա վստահ ասել: Կառավարության միաձայն որոշումը մեծացնում է հավանականությունը, բայց խորհրդարանն իրավաբանորեն ինքնուրույն մարմին է: Հետեւաբար, այսօր ամենաճիշտ պատասխանն է. հավանականությունը բարձրացել է, սակայն վերջնական արդյունքը դեռ հայտնի չէ: Եվ պետք չէ մոռանալ ՀՀ իշխանությունների արձագանքը, որը կարող է նաեւ վնասել գործընթացի շարունակմանը:

Կլինի՞ արդյոք սա վերջնական ճանաչումը. իրավական առումով՝ ոչ: Խորհրդանշական առումով՝ այո, բավական մեծ չափով: Պատճառը պարզ է. Իսրայելը հրեական ժողովրդի ազգային պետությունն է, որի ինքնության կարեւորագույն հիմնասյուներից մեկը Հոլոքոստի հիշողությունն է: Այդպիսի պետության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ունի բացառիկ բարոյական եւ քաղաքական կշիռ:

Եթե փորձենք համադրել բոլոր փաստերը, ապա կստացվի հետեւյալը. Հայոց ցեղասպանությունը պատմական իրողություն է, որի վերաբերյալ միջազգային գիտական հանրության մեծ մասը կոնսենսուս ունի: Պետությունները նման հարցերում գրեթե միշտ առաջնորդվում են ոչ միայն պատմական ճշմարտությամբ, այլեւ իրենց ազգային շահերով: Իսրայելի այս որոշման մեջ առկա են եւ բարոյական, եւ աշխարհաքաղաքական շարժառիթներ: Եթե Կնեսետը հաստատի որոշումը, դա կլինի կարեւոր բարոյական հաղթանակ հայ ժողովրդի համար, սակայն պետք է այն դիտարկել որպես Հայաստանի առջեւ ծառացած բոլոր խնդիրների լուծում: Թուրքիայի համար դա կլինի դիվանագիտական եւ խորհրդանշական նոր ճնշում, բայց դժվար թե փոխի Անկարայի պաշտոնական դիրքորոշումը: Միջազգային հարաբերություններում պատմական արդարությունը հաճախ առաջ է շարժվում ոչ թե մեկ մեծ քայլով, այլ բազմաթիվ փոքր քայլերի օգնությամբ: Եթե Իսրայելի խորհրդարանը նույնպես ընդունի ճանաչման որոշումը, այդ քայլերից մեկը կլինի նաեւ սա:

Այս ամենից մի կարեւոր եզրահանգում պետք է անենք. պատմական ճշմարտության ճանաչումը եւ պետությունների քաղաքական հաշվարկները կարող են գոյություն ունենալ միաժամանակ: Մեկի առկայությունն ինքնաբերաբար չի հերքում մյուսին: Այդ պատճառով էլ այս զարգացումը կարելի է գնահատել եւ որպես պատմական արդարության կարեւոր դրվագ, եւ որպես տարածաշրջանային քաղաքականության մաս՝ առանց այդ երկու գնահատականները միմյանց հակադրելու:

ՀԳ. *Եթե Իսրայելի խորհրդարանը վերջնականապես ճանաչի Հայոց ցեղասպանությունը, դա չի փոխի կատարվածի ողբերգականությունը՝ չի փոխի 1915 թվականի գոյությունը, բայց կարող է փոխել 2026 թվականը՝ ցույց տալով, որ նույնիսկ ամենաբարդ աշխարհաքաղաքական պայմաններում անակնկալ է լինում: Եթե գործընթացը կանգ առնի, դա եւս մեկ անգամ կհաստատի, որ միջազգային քաղաքականության մեջ պատմական արդարությունը զիջում է պետական շահին: Ամեն դեպքում, մի բան փաստ է. մեկ դար անց էլ Հայոց ցեղասպանության հիշողությունը շարունակում է մնալ համաշխարհային խղճի քննության առարկա:*

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

«ՔՐԱՆՖՈՐԴ». ԺԱՄԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բրիտանական սերիալների շարքում «Քրանֆորդը» (2007-2009 թթ.) այն լավ օրինակներից է, որտեղ գլխավոր աղբյուրը մարդկային հարաբերություններն են, դրամատիզմը, որտեղ կա ասելիք, որը ստիպում է դիտողին մտորել ժամանակի բերած փոփոխությունների, դրանց հանդեպ մարդկանց վերաբերմունքի, երբեմն՝ ցուցաբերած դիմադրության մասին: Սերիալը ստեղծվել է BBC-ի կողմից: Հիմքում 19-րդ դարի անգլիացի կին գրող Էլիզաբեթ Գասքելի մի քանի վեպերն են:

Սերիալի հեղինակները կարողացել են համադրել այնպիսի կարեւոր թեմաներ, ինչպիսիք են մարդկային բնությունը, ժամանակն ու կյանքը՝ արտացոլված անգլիական ոչ մեծ գավառական քաղաքում: Սերիալի գործողությունները ծավալվում են հեռավոր 1840-ական թվականներին, երբ արդյունաբերական հեղափոխությունը փոխում էր բրիտանական տնտեսությունը, նաեւ՝ քայքայում կյանքի սովորական ռիթմը գավառական քաղաքներում: Քրենֆորդը դառնում է ավանդական Անգլիայի յուրօրինակ մոդելը, որն ապրում է իր ուրույն օրենքներով: Քաղաքի բնակիչները զբաղված են իրենց կենցաղային հարցերով՝ մեկմեկու այցեր, վերջին նորությունների քննարկումներ, վարվեցողության կանոնների պահպանման հանդեպ ամենայն խստապահանջություն: Սակայն այս «չափված-ձեւված» կյանքը դառնում է այն գեղարվեստական հնարքը, որը թույլ է տալիս, որ ծավալվեն ավելի մեծամասշտաբ պրոցեսներ: Արտաքին հանդարտահոսության տակ ապագայի հանդեպ վախն ու անորոշությունն է, սոցիալական անհավասարությունը, մենակությունը, տնտեսական անկայունությունն ու պատմական փոփոխությունների անխուսափելիությունը: Հեղինակները գիտակցաբար հակադրում են երկու աշխարհ՝ հին ավանդական Անգլիան եւ վրա հասնող արդյունաբերական ժամանակաշրջանը, որի խորհրդանիշն է դառնում երկաթուղին: Այն ոչ միայն տեխնիկական առաջընթաց է ապահովում, այլ նաեւ խաթարում է ավանդական սոցիալական կապերը՝ ստիպելով հերոսներին վերանայել իրենց կյանքն ու կենցաղը: «Քրանֆորդի» յուրահատկություններից մեկը թերեւս այն է, որ ամեն բան դիտարկվում է կանացի հայացքի դիտանկյունից, աշխարհն ու կյանքը պատկերվում են կանանց ճակատագրերի միջոցով:

Հերոսուհիները կանայք են՝ այրիներ, չամուսնացած կանայք, տնային տնտեսուհիներ, միջին դասի կանայք, որոնք զրկված են քաղաքական իշխանությունից, ըստ այդ ժամանակների օրենքների, սակայն հենց նրանք են հանդիսանում քաղաքի բարոյական օրենքների թելադրողն ու մթնոլորտ ձեւավորողը: Սերիալում գլխավոր եւ երկրորդական դերեր չկան: Յուրաքանչյուր հերոս դառնում է բարդ սոցիալական «գործվածքի» մի «թելը», որտեղ նույնիսկ աննշան իրադարձությունը մեկնաբանվում ու դառնում է նշանակալի: Այստեղ անցյալի ռոմանտիկացում չկա: Հեղինակները ցույց են տալիս, որ ավանդական հասարակությունը կարող է լինել եւ շատ հարմարավետ, եւ շատ դաժան: Այդ հասարակությունում մարդիկ պատրաստ են մեկմեկու հասնել օգնության, սակայն վայ քեզ, եթե հասարակական ընդունված նորմերից նահանջ կամ շեղում ունեցար: Փոքր-ինչ շեղումը բավական է՝ դատապարտվելու համար: Կյանքը սկսում է արդիականանալ. հայտնվում են երիտասարդ բժիշկներ, ներդրվում են բուժական նոր մեթոդներ, չունեւորների համար կրթությունը դառնում է հասանելի: Հարց է, թե փոքրիկ քաղաքում այս բոլոր նորարարություններն ինչպես են ընդունվում եւ ինչպիսի դիմադրության արժանանում: Սերիալում կոնֆլիկտը ոչ թե չարի եւ բարու միջեւ է, այլ հնի ու նորի, անցյալի եւ ապագայի, իսկ ներկան այդ կոնֆլիկտի թատերաբեմն է: Սերիալում հանդես են եկել Ջուդի Դենչը, Իմելդա Սթոնթոնը, Այլին Աթքինսը, Ջուլիա Մաքենզին, Բարբարա Ֆլինը եւ բրիտանացի այլ հայտնի դերասան-դերասանուհիներ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԻԿՈԼՆ ԱՅԴՏԵՂ ՀԻ ՊՐԻ ՉԵՄ

Ֆրանսիացի նշանավոր փիլիսոփա, մաթեմատիկոս, երաժշտագետ, ֆիզիկոս, աստղագետ, երաժշտության տեսաբան Ռենե Դեկարտին է պատկանում հանրահայտ «Կասկածում եմ, ուրեմն՝ մտածում եմ, մտածում եմ, ուրեմն՝ գոյություն ունեմ» դատողությունը: Քանի որ ես ո՛չ ֆրանսիացի եմ եւ ո՛չ էլ այդչափ շնորհների տեր, ընդամենը կասեմ՝ չեմ հավատում: Բայց ոչ թե ընդհանրապես հավատ չունեմ, այլ չեմ հավատում կոնկրետ մի երեւույթի: Ինչ վերաբերում է հավատ ունենալուն, ապա խոստովանեմ. համարյա կես դար ապրելուց հետո հասկացա, որ հնարավոր չէ առանց Աստծո: Եվ ամեն Աստծո օր սկսում եմ Տերունական աղոթքը մտքումս արտասանելով (գրաբարով): Իսկ չեմ հավատում, որ ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը չեզոք դիրք է գրավել Սիմոնյան Ալենի պաշտոնավարման հարցում: Ո՞նց կարելի է «ուրախ ավտոբուսում» Ալենի հետ կողք-կողքի նստած «պեռաշկի» ու այլ բարիքներ վայելել, իսկ հետո հայտարարել, թե Ռոբինյանի թեկնածությունն ընդունվել է վարչության նիստում փակ, գաղտնի քվեարկությամբ, եւ ինքն այդտեղ ни при чём (այսինքն՝ մեղավոր չէ):

Դե, եթե ինքը մեղք չունի, Ալենն էլ խիստ վիրավորվելու հիմք ունի: Բայց ոչ այն աստիճան, որ թշնամանա նրա հետ: Ուղղակի նրա համարձակությունը բավարարեց այն բանին, որպեսզի դրժի սեփական խոստումը: Դա այնպիսի խոսք չէր, որպեսզի դրժումն էլ փոթորիկ հարուցեր առնվազն ՔՊ-ում: Ինչպես, ասենք, Սերժի խոստումը, որ փոթորիկ հարուցեց ողջ հանրապետությունում: Ալենն ընդամենը խոստացել էր, որ կվարվի այնպես, ինչպես կորոշի ՔՊ վարչությունը: Իսկ վարչությունը սկզբում որոշեց, որ Ալենը պետք է պատգամավորի թեկնածու գրանցվի: Նա համաձայնեց: Հետո նույն վարչությունը որոշեց, որ Ալենն այլեւս չպետք է լինի ԱԺ նախագահի ՔՊ-ական թեկնածու: Ու այստեղ տեղի ունեցավ անհավանականը. վիրավորված Ալենը մոռացավ, որ ինքը խոստացել էր լինել շարքային պատգամավոր, եթե այդպես որոշի վարչությունը: Ու խիստ վիրավորված՝ որոշեց հրաժարվել պատգամավորական մանդատից:

Սա արդեն համարձակության ավելի մեծ դոզա պահանջող վարքագիծ էր, ինչի առումով կարելի կլիներ նույնիսկ շնորհավորել նրան: Բայց քանի որ այն, այնուամենայնիվ, սահմանափակ էր, այդ որոշումը, իր ասելով, քննարկել է վարչապետի հետ ու, ենթադրաբար, ստացել է նրա համաձայնությունը: Որպես ասվածի հավաստում՝ ավելացրեց, որ քաղաքական առումով չի հեռանալու, միշտ կլինի նրա կողքին՝ կես կամ մեկ քայլ ետ: Իսկ որպեսզի նախկինում տրված խոստումը դրժելը հիմնավորվի, հիշեց, որ ինքը հանգստանալու կարիք ունի, ինչպես նաեւ՝ պետք է լուծի անձնական հարցեր: Հետաքրքիր է՝ բոլոր նրանք, ում բախտը չի բերում, պաշտոնազրկումը հիմնավորում են հանգստանալու կարիքով: Թեկուզ պաշտոնավարեն երկու կամ քսան տարի:

Հարց կառաջանա՝ իսկ ինչո՞ւ, այնուամենայնիվ, ՔՊ-ականները նախընտրեցին Ռուբինյան Ռուբենին: Հենց իրենք էին ասում, որ բռնկուն է, ես կավելացնեի՝ ոչ ավելի բռնկուն, քան իր առաջնորդը: Իսկ ԱԺ նախագահի պաշտոնում կսազեր մեկը, որն ավելի հանգիստ լիներ, քան Ալենը: Չնայած, հաշվի առնելով Նիկոլի՝ խիստ բռնկուն լինելու հանգամանքն ու ավելի մեծաթիվ ու ավելի ըմբոստ ընդդիմության առկայությունը խորհրդարանում, Նիկոլին ձեռք կտար հենց այդպիսի թեկնածուն: Բայց, այնուամենայնիվ, կարծում եմ, որ Ալենին Նիկոլը «ժերտվա է տվել» շատ ավելի լուրջ պատճառով: Այն է՝ ՌԴ ղեկավարության հետ լեզու գտնելու ակնկալիքով, հաշվի առնելով Ալենի «խիստ համարձակ» ելույթներն ընդդեմ ռուսների: Կամ էլ թուրքերի հետ բանակցող Ռուբենի կարգավիճակը բարձրացնելով՝ Նիկոլը հույս ունի դրդել թուրքերին, որ արագացնեն դիվանագիտական եւ այլ հարաբերությունների հաստատումը Հայաստանի հետ: Չնայած մեկը մյուսին չի խանգարում՝ գոյության իրավունք ունի թե՛ «պրոռուսական ժերտվան» եւ թե՛ թուրքերի խնդիրը: Մի խոսքով, Ալենի բախտը չբերեց, եւ դա նման էր անամպ երկնքում ամպերի որոտի:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

Մարզպետն իր խորհրդականին խրախուսել է

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը հունիսի 25-ին իր խորհրդական Մանանա Գալստյանին «հատուկ առաջադրանքները եւ աշխատանքները ժամանակին եւ որակյալ իրականացնելու համար» խրախուսել է մեկ ամսվա աշխատավարձով: Մենք ուսումնասիրեցինք Կարեն Սարգսյանի եւ Մանանա Գալստյանի կենսագրությունները եւ պարզեցինք, որ նրանք վաղեմի գործընկերներ են: Մինչեւ 2018 թվականը ոչ մի պաշտոն չզբաղեցրած Կարեն Սարգսյանը 2020 թվականից մինչեւ 2021թ. սեպտեմբերի 3-ը աշխատել է որպես ՏԿԵՆ Ջրային կոմիտեի նախագահ: Մանանա Գալստյանը 2020-2021թթ. ՏԿԵՆ Ջրային կոմիտեում աշխատել է որպես տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող, այնուհետեւ՝ մամուլի պատասխանատու: Կարեն Սարգսյանը 2021 թ. սեպտեմբերի 8-ին նշանակվել է Գեղարքունիքի մարզպետ, Մանանա Գալստյանը 2021թ. սեպտեմբերի 28-ին՝ Կ. Սարգսյանի մարզպետ նշանակվելուց 20 օր անց, նշանակվել է Գեղարքունիքի մարզպետի օգնական, իսկ 2025թ. սեպտեմբերի 17-ին՝ մարզպետի խորհրդական: 35-ամյա Մանանա Գալստյանն ի՞նչ «հատուկ առաջադրանքներ եւ աշխատանքներ է ժամանակին եւ որակյալ իրականացնում», որ մարզպետը ուր գնում է, նրան հետը տանում է եւ լրացուցիչ էլ խրախուսում է:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 4.07.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒՀԻՆ ԻՆՉՈ՞Ւ Է ԴԻԼԻՋԱՆԻ ԻՐ ՀՐԱՇՔ ՀՈՂԸ ՆՎԻՐԵԼ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Դավիթ Սարգսյանին է դիմել Նարինե Մելիքսեթի Կարապետյանը՝ իր սեփականությունը հանդիսացող՝ ք. Դիլիջան, Աղբյուր Սերոբի փողոց, թիվ 16 հասցեի 0.2889 հա հողամասը, որպես սեփականություն, անհատույց փոխանցել (նվիրել) Դիլիջան համայնքին: Դիլիջանի ավագանին 2026 թ. հունիսի 23-ի թիվ 1196-Ա որոշմամբ համաձայնություն է տվել նշված հողամասը որպես նվիրատվություն Դիլիջան համայնքին ընդունելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Հունիսի 30-ին Դիլիջանի համայնքապետ Դ. Սարգսյանը, ելնելով վերոգրյալից, որոշել է.

1. Նարինե Մելիքսեթի Կարապետյանի կողմից որպես նվիրատվություն Դիլիջան համայնքին, ընդունել Դիլիջան համայնքի ք. Դիլիջան, Աղբյուր Սերոբի փողոց, թիվ 16 հասցեի 0.2889 հա հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 11-003-0711-0027):

2. Կնքել հողամասի նվիրատվության պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:

3. Վերոհիշյալ 0.2889 հա հողամասն օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջան համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում՝ որպես Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հող:

Սա շատ կասկածելի գործարք է, կասկածահարույց նվիրատվություն: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ՀՀ ընտրողների ռեգիստրի բաժնում որոնում տալով պարզեցի, որ 1977թ. ծնված Նարինե Մելիքսեթի Կարապետյանը Երեւանի Արաբկիր համայնքի բնակիչ է: Դիլիջանի բնակիչներից տեղեկացել եմ, որ Աղբյուր Սերոբի փողոցը տուրիստական քաղաքի հրաշագեղ վայրերից է, այն ԱՍԱԼԱ-ի մարտիկ, 2019 թվականին մահացած Վարուժան Կարապետյանի շքեղ առանձնատուն տանող փողոցն է: Այդտեղ է գտնվում Վ. Կարապետյանի հուշաքարով աղբյուրը, նրա հիմնած ձիարշավարանը, վերջին տարիներին կառուցված ալպյան ինչ-որ ամրոց, ռեստորան, հյուրանոց, մեծահարուստ անձանց մի քանի առանձնատուն: Դիլիջանցիների վկայությամբ՝ սա մի հրաշք վայր է, բիզնեսի մեծ հնարավորություններով:

Տուրիստական Դիլիջանում բնակելի եւ հասարակական կառուցապատման հողերի շուկայական գինը շատ բարձր է, լավ տեղանքում 2889 քառակուսի մետր մակերեսով հողամասի գինը կարող է հասնել տասնյակ միլիոնավոր դրամների: Երեւանի բնակչուհին ինչո՞ւ պետք է իրեն պատկանող եկամտաբեր, բնակելի կառուցապատման ենթակա հողը նվիրաբերի Դիլիջան համայնքին: Այս հանելուկը պարզելու համար հարկավոր է կամ խոսել նվիրատվություն արած քաղաքացու, կամ Դիլիջան համայնքը 2021-ից ղեկավարող Դավիթ Սարգսյանի հետ: Սակայն առաջինի կոնտակտները չգտանք, իսկ ՔՊ-ական համայնքապետը, խախտելով օրենքը, չի պատասխանում մեր ուղարկած տեղեկատվական հարցումներին:

Նախկինում էլ Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում տեղեկատվություններ են հրապարակվել՝ Դիլիջան համայնքին որոշ քաղաքացիների նվիրաբերած հողամասերի մասին: Սակայն հողամասի նվիրատվության այս դեպքն առավել հետաքրքիր է:

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը հայտնում է, որ Դիլիջան համայնքի ղեկավար

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am